ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ՀԱՎԱՍԱՐ
Եվրոպական միությունը հանուն կանանց իրավազորման Հայաստանում

oxYGen

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա
Coalition to stop violence against women

# ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ

## Միջազգային իրավակարգավորումների և դատական գործերի վերլուծություն



© Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա

ԵՐԵՎԱՆ 2024

***Հետազոտության հեղինակներ՝***

*Հասմիկ Պետրոսյան,*

*Վաղինակ Տեր-Հովհաննիսյան*

***Սրբագրիչ՝*** *Ազնիվ Նասլյան*

***Ձևավորումը՝*** *«Զարտպրինտ»-ի*

*Հետազոտությունը պատրաստվել է «Կանանց և աղջիկների համար բռնությունից զերծ կյանքի համապարփակ քաղաքականությանն ուղղված ենթադրամաշնորհային ծրագրի» շրջանակում:*

*«Կանանց և աղջիկների համար բռնությունից զերծ կյանքի համապարփակ քաղաքականությանն ուղղված ենթադրամաշնորհային ծրագիրն» իրականացվում է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի կողմից «ՀԱՎԱՍԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավազորման Հայաստանում» ծրագրի շրջանակում:*

*Ծրագիրն իրականացվում է ՕքսԵՖեն հիմնադրամի, «Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի, «Նիդերլանդների հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամի կողմից, «Վիննեթ Շվեդիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:*

*Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:*

*Ուսումնասիրությունից որևէ հատված օգտագործելու և մեջբերելու պարագայում համապատասխան հղում կատարելը պարտադիր է:*

ISBN 978-9939-9295-9-0

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Հապավումներ ........................................................................................ 2

Ներածություն .......................................................................................... 3

Ուսումնասիրության առարկան և մեթոդաբանությունը ................................ 4

1. Գենդերով պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների կարգավորման միջազգային պրակտիկան .................................................. 8

Եզրակացություն .................................................................................... 15

1.1. Կանանց նկատմամբ ֆիզիկական բռնությունը ......................................... 16

Եզրակացություն .................................................................................... 19

1.2. Կանանց նկատմամբ սեռական բռնությունը ............................................ 20

Եզրակացություն .................................................................................... 25

1.3. Կանանց նկատմամբ հոգեբանական բռնությունը ...................................... 25

Եզրակացություն .................................................................................... 28

1.4. Կանանց նկատմամբ տնտեսական բռնությունը ....................................... 29

Եզրակացություն .................................................................................... 33

2. ՀՀ քրեական նոր օրենսգրքի վերաբերելի կարգավորումների վերլուծություն ....................................................................................... 33

Եզրակացություն .................................................................................... 42

2.1. Գենդերային բռնության կանխարգելման ազգային գործողությունների գնահատում ....................................................................................... 43

Եզրակացություն .................................................................................... 49

3. Դատական գործերի ուսումնասիրություն ................................................. 51

Եզրակացություն .................................................................................... 57

Առաջարկություններ ............................................................................... 59

Հավելված 1 ........................................................................................... 61

Հավելված 2 ........................................................................................... 66

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

**ՀԿ** – Հասարակական կազմակերպություն

**ՀՀ** – Հայաստանի Հանրապետություն

**ԵԽ** – Եվրոպայի խորհուրդ

**ԵՄ** – Եվրոպական միություն

**ԼԲՏ** – Լեսբի, բիսեքսուալ, տրանս

**ԿԶՆ** – Կայուն զարգացման նպատակներ

**ՄԱԿ** – Միավորված ազգերի կազմակերպություն

**ՄԻՊ** – Մարդու իրավունքների պաշտպան

**ՄԻԱՎ** – Մարդու իմունային անբավարարության վիրուս

**ՄԻԵԴ** – Մարդու իրավունքների եվրոպական դատարան

**ՆԳՆ** – Ներքին գործերի նախարարություն

**ՔՔԻՄԴ** – Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը նախանշել է երկրում գենդերային հավասարության քաղաքականության ապահովման վեց գերակայություններ, որոնք ուղղված են եղել կյանքի տարբեր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների կիրարկման ու հնարավորությունների իրացման համար բարենպաստ և դրական միջավայրի ստեղծմանը[1]: Դրանցից մեկը վերաբերում է գենդերային բռնության և խտրականության հաղթահարմանը, կանանց և աղջիկների նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելմանը, բռնության ենթարկված կանանց և աղջիկների պաշտպանությանն ու աջակցությանը: Թեև պետությունը մեխանիզմներ է ստեղծել և ջանքեր է գործադրում կանանց և աղջիկների համար ավելի ապահով և անվտանգ միջավայր ստեղծելու, սակայն գենդերային հիմքով բռնությունները կանխելու, կանանց նկատմամբ խտրականությունը հաղթահարելու և իրավունքների պաշտպանության, այդ թվում՝ արդարադատության մատչելիության հետ կապված կան մարտահրավերներ:

Գենդերային հիմքով բռնությունը դեռևս լուրջ սոցիալական խնդիր է Հայաստանում: Թե՛ ոլորտային հասարակական կառույցները, թե՛ ՀՀ ՄԻՊ-ը արձանագրում են Հայաստանում կանանց իրավունքների ոտնահարման և նրանց նկատմամբ խտրականության դրսևորման շարունակական դեպքեր[2]: Մեր երկրում կարող ենք ականատես լինել կանանց նկատմամբ բռնության ամենատարբեր դրսևորումների՝ ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնություն, սեռական հետապնդում, հարկադիր ամուսնություններ, հղիության հարկադիր ընդհատումներ և այլն: Ինչպես փաստում են վերլուծությունները, Հայաստանում զուգընկեր ունեցած 15-59 տարեկան կանանց 14.8%-ը երբևէ կյանքի ընթացքում ամուսնու/զուգընկերոջ կողմից ենթարկվել է ֆիզիկական բռնության, 6.6%-ը ենթարկվել է սեռական բռնության, իսկ սեռական բռնության ենթարկվածների 62.5%-ը՝ նաև ֆիզիկական բռնության: Ընդ որում՝ գյուղաբնակ կանայք, քաղաքաբնակների համեմատ, ավելի շատ են ենթարկվում չափավոր և դաժան ֆիզիկական բռնության: Սակայն Հայաստանում կանանց մեծ մասը (67%) ոչինչ չի ձեռնարկում բռնությունից պաշտպանվելու համար[3]:

Կանանց նկատմամբ բռնության գենդերային բնույթն արմատավորված է կանանց և տղամարդկանց միջև իրավազորության անհավասարակշռության և անհավասարության մեջ[4]: Եվ կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերը կանխարգելելու ուղղությամբ

---

[1] Տե՛ս ՀՀ կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 9-ի N 1334-L որոշումը «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին». https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134904

[2] Տե՛ս ՀՀ ՄԻՊ, Տարեկան հաղորդում, 2020 թ., ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին, էջ 1121. https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf
Տե՛ս ՀՀ ՄԻՊ, Տարեկան հաղորդում, 2021 թ., էջ 203. https://www.ombuds.am/images/files/ded28fc38628cec4bf73310c9df1f785.pdf

[3] Տե՛ս Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերլուծություն, վերլուծական զեկույց, 2021 թ., էջ 97. https://armstat.am/file/article/gbv_report_arm.pdf

[4] Տե՛ս Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում, 12-րդ հոդված. «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վերաբերյալ փաստաթղթերի հավաքածու, 2014 թ., էջ 8. https://rm.coe.int/art-12-armenian-2-/16808f0f7f

անհրաժեշտ է պետական համակարգային մոտեցում՝ ներառյալ բռնության կանխարգելում, զոհի պաշտպանություն և բռնարարին պատասխանատվության ենթարկում: Սա ենթադրում է, որ պետության կողմից պետք է ապահովվի պատշաճ արդարադատական համակարգ՝ երաշխավորելու յուրաքանչյուր իրավախախտման դեպքում իրավունքների լիարժեք պաշտպանություն ու վերականգնում: Սակայն այսօր Հայաստանում բռնության ենթարկված կանանց համար արդարադատության մատչելիությունը լի է բազմաթիվ խոչընդոտներով ու խնդիրներով[5]: Ավելին՝ ՀՀ օրենսդրությունը չունի ընտանեկան բռնության դեպքերով առանձին (հատուկ) իրավակարգավորումներ, օրինակ՝ ՀՀ դատարաններում ընտանիքում բռնության դեպքերի քննությունն իրականացվում է ընդհանուր ընթացակարգով: Սա ենթադրում է, որ ընտանեկան բռնության գործերի քննության սեղմ (հատուկ) ժամկետները և դատավարությունները կարող են ձգվել տարիներ շարունակ, մինչ զոհի անվտանգությունը կարող է վտանգված լինել: Քաղաքացիական և քրեական դատավարությունների ընթացքում չի ապահովվում գենդերային զգայունության, զոհակենտրոն մոտեցման և կրկնակի զոհականացման արգելքի սկզբունքների պահպանումը և այլն[6]:

# ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Սահմանադրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով և վավերացված միջազգային փաստաթղթերով երաշխավորվում է կանանց և տղամարդկանց հավասարությունը: Սա նաև ենթադրում է պաշտպանել կանանց գենդերային բռնության տարատեսակ դրսևորումներից և երաշխավորել նրանց իրավունքների պաշտպանության պատշաճ ապահովումը, այդ թվում՝ արդար դատական պրակտիկայի և արդարադատության մատչելիության շնորհիվ: Հետևաբար անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային փորձը, ոլորտային իրավակարգավորումներն ու իրավակիրառ պրակտիկան՝ պարզելու առկա խնդիրներն ու ներկայացնելու դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

Սույն ուսումնասիրության նպատակն է՝ վերլուծել գենդերային հիմքով բռնության դեպքերով ՀՀ նորմատիվ իրավական ակտերի կիրառման պրակտիկան՝ պարզելու կանանց արդարադատության մատչելիությունը, մասնավորապես՝ նոր իրավակարգավորումների ազդեցությունը իրավակիրառ պրակտիկայի վրա: Մասնավորապես, *ուսումնասիրության խնդիրն է՝ վերլուծել գենդերային հիմքով բռնության դեպքերով այն դատական գործերը (կամ ակտերը), որոնք վերաբերում են ընտանեկան բռնությանը, սեռական բռնությանը, հոգեբանական բռնությանը, տնտեսական կամ բռնության այլ ձևերին:* Դատական գործերի ուսումնասիրության ընթացքում փորձ է արվել տվյալներ ձեռք բերել նաև կանանց (և աղջիկների) տարբեր խմբերի և նրանց՝ արդարադատությանը հասանելիության վերաբերյալ:

[5] Տե՛ս Բռնության ենթարկված կանանց արդարադատության մատչելիության իրավունքը Հայաստանի Հանրապետությունում, զեկույց, 2022 թ., էջ 68. https://coalitionagainstviolence.am/wp-content/uploads/2022/
[6] Տե՛ս Ընտանեկան բռնության արձագանքման մարտահրավերներն ու բացերը Հայաստանի Հանրապետությունում, զեկույց, էջեր 60-61. https://issuu.com/csvwarmenia/docs/domestic_20violence_arm_30_06.2020_20_1_

Ուսումնասիրությունն ուշադրություն է դարձրել հետևյալ երեք ենթանպատակներին.

1. Վերլուծել գենդերային հիմքով հանցագործությունների միջազգային պրակտիկան՝ պարզելու միջազգային կանոնակարգերի հիմնական մոտեցումները:
2. Վերլուծել ՀՀ քրեական նոր օրենսգրքի հիման վրա գենդերային հիմքով բռնության դեպքերով քրեական վարույթները՝ պարզելու համար նոր իրավակարգավորումների ազդեցությունը իրավակիրառ պրակտիկայի վրա:
3. Կատարել ՀՀ քրեական նոր օրենսգրքի կարգավորումների իրավական վերլուծություն՝ գնահատելու համար նոր կարգավորումների ազդեցությունը գենդերային հիմքով բռնության վերաբերյալ գործերով իրավակիրառ պրակտիկայի վրա:

Ուսումնասիրությունն իրականացվել է նախնական տվյալների հավաքման, միջազգային և ներպետական իրավական կարգավորումների և դատական գործերի/ակտերի վերլուծության հիման վրա: Վերլուծության արդյունքում ներկայացվել են ոլորտային իրավական կարգավորումների և դատական պրակտիկայի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունն ընդգրկում է 2022-2024 թվականներին կայացված դատական գործերի շրջանակը: Մասնավորապես, *ուսումնասիրության թիրախն են 2022 թվականի հուլիսին ուժի մեջ մտած քրեական նոր օրենսգիրքը և դրա կատարման պրակտիկան՝ պարզելու գենդերային հիմքով բռնության դեպքերով նոր իրավակարգավորումների ազդեցությունը իրավակիրառ պրակտիկայի վրա: 2022-2024 թվականներին դատարանների կողմից գենդերային հիմքով բռնության գործերով կայացված դատական գործերի հայտնաբերումն իրականացվել է www.datalex.am դատական ակտերի որոնման համակարգի միջոցով:* Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել է համեմատական վերլուծության և համադրման մեթոդաբանությունը:

Գենդերային հիմքով բռնությանը վերաբերող դատական պրակտիկայի վերլուծությունն իրականացվել է քրեական գործերի քննությամբ դատարանների կողմից ոչ միայն վերջնական՝ ըստ էության կայացված դատական ակտերի, այլև www.datalex.am դատական ակտերի որոնման համակարգում առկա ուսումնասիրության առարկա ամբողջ դատական գործի ուսումնասիրությամբ, որով հնարավոր եղավ պատկերացում կազմել խնդրի վերաբերյալ:

Հետազոտական հարցերի շրջանակը ներառում է պարզել կամ վերլուծել.

- *մեղադրական և արդարացման դատավճիռների կայացումը,*
- *դատարանների կողմից ընտրված պատիժների տեսակները,*
- *պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները,*

- *նշանակված պատժաչափի համեմատությունը հանցանքի համար նախատեսված պատժատեսակների հետ,*
- *հանրային և մասնավոր մեղադրանքը,*
- *դատական գործերի քննության ժամկետները,*
- *միջազգային իրավունքի կիրառումը դատարանների կողմից,*
- *ընտանեկան բռնության շղթայի ազդեցությունը հանցանքի որակման վրա,*
- *հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պահանջը,*
- *պաշտպանական որոշումների կայացումը,*
- *դատական ակտերի բողոքարկումը,*
- *գենդերային կարծրատիպերի վերարտադրումը դատական ակտերում:*

Ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով դատական գործերի/ակտերի ուսումնասիրության մեթոդաբանական հարցաշարը ներառում է հետևյալ հարցերը.

- *Քանի՞ հաղորդում է ներկայացվել, որտեղ տուժողը կին է:*
- *Տուժող կանանցից քանի՞սն են եղել հաշմանդամություն ունեցող, քանի՞սը՝ ՄԻԱՎ-ով ապրող, քանի՞սը՝ լեսբի, բիսեքսուալ, տրանս:*
- *Ներկայացված հաղորդումներից քանիսո՞վ են քրեական գործեր հարուցվել:*
- *Ներկայացված հաղորդումներից քանիսի՞ պարագայում է, որ ենթադրյալ հանցանքը կատարվել է ընտանիքի անդամի կողմից:*
- *Եթե հարուցվել են քրեական վարույթներ, ապա դրանցից քանիսի՞ դեպքում է արարքը որակվել «գենդերային հիմքով բռնություն»:*
- *Եթե հարուցվել են քրեական վարույթներ, ապա արարքներից քանի՞սն են սեռական, ֆիզիկական և տնտեսական, հոգեբանական բռնություն:*
- *Հարուցված քրեական վարույթներից քանի՞սն են մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան:*
- *Ի՞նչ վերջնական դատական ակտեր են կայացվել:*
- *Ինչպիսի՞ պատիժ է ընտրվել՝ ազատազրկման հետ կապվա՞ծ, թե՞ չկապված:*
- *Մեղմացնող և/կամ ծանրացնող ի՞նչ հանգամանքներ են հաշվի առնվել պատժաչափը որոշելիս:*
- *Տվյալ հոդվածով սահմանված պատժաչափերից ո՞րն է ընտրվել ըստ խստության:*
- *Դիտարկվող գործերից քանի՞սն են եղել հանրային մեղադրանքի, քանի՞սը՝ մասնավոր մեղադրանքի գործեր:*
- *Որքա՞ն է եղել քրեական վարույթի տևողությունը:*
- *Արդյո՞ք խտրական դրսևորումներն արտացոլված են մեղադրական եզրակացության մեջ կամ դատական ակտում:*
- *Արդյո՞ք առկա են դատական գործեր, որտեղ անմիջականորեն կիրառվել են միջազգային իրավունքի համապատասխան նորմերը կամ չափանիշները՝ հիմնվելով Սահմանադրության 81-րդ հոդվածի վրա (օրինակ՝ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը):*
- *Արդյո՞ք ընտանեկան բռնության նախկին դրվագների առկայությունը,*

*պարբերական բնույթը ազդեցություն ունեցել են հանցագործության որակման վրա, թե՞ որակումը եղել է միայն բռնության մեկ դրվագի վերաբերյալ:*

- *Արդյո՞ք հարուցված քրեական գործերի հիման վրա տուժողը բռնության հետևանքով կրած ծախսերի (օրինակ՝ առողջապահական ծառայություններից օգտվելու մասով) փոխհատուցում ստացել է:*
- *Արդյո՞ք տուժողը կամ տուժողի իրավահաջորդը ունեցել է փաստաբան, ո՞ր փուլում և ի՞նչ հիմունքներով (եթե հնարավոր է, դատական ակտից պարզել):*
- *Արդյո՞ք դատարանը կայացրել է պաշտպանական որոշումներ (եթե հնարավոր է, դատական ակտից պարզել):*
- *Ի՞նչ ժամկետում է պաշտպանական որոշում կայացվել և քանի՞ օրով (եթե հնարավոր է, դատական ակտից պարզել):*
- *Արդյո՞ք երկարացվել է պաշտպանական որոշումը: Եթե այո, ապա ո՞վ է դիմել և ի՞նչ ժամկետներում (եթե հնարավոր է, դատական ակտից պարզել)[7]:*

Ուսումնասիրությունն իրականացվել է վիճակագրական տվյալների, դատական ակտերի հավաքման և դրանց վերլուծության միջոցով: Պատրաստվել և ուղարկվել են համապատասխան տեղեկատվություն ստանալու հարցումներ ՀՀ ոստիկանություն, քննչական կոմիտե, դատական դեպարտամենտ՝ պարզելու ուսումնասիրության առարկա նկարագրական և վիճակագրական տվյալները: Այնուհետև ուսումնասիրվել են ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական իրավակարգավորումները: Արդյունքում վերլուծվել են բոլոր տվյալները, ինչի հիման վրա ներկայացվել են առաջարկություններ:

Նախատեսվել է վերլուծել առնվազն 20 դատական գործեր/ակտեր՝ հավաքված www.datalex.am դատական ակտերի որոնման համակարգից: Դատական գործերը/ակտերը վերաբերել են գենդերային հիմքով բռնությանը, այդ թվում՝ ընտանեկան բռնությանը, ընդ որում՝ ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական, սեռական կամ այլ տեսակի բռնությանը: Դատական ակտերի որոնման համակարգից ուսումնասիրության առարկա անհրաժեշտ տեղեկություններ չստանալու պատճառով տվյալներ հավաքվել են ոլորտային հասարակական կազմակերպություններից՝ հարցումների ձևաչափով (դատական գործերի կամ ՀԿ-ներից անհրաժեշտ տեղեկությունների հավաքման գործընթացի մասին նկարագրված են համապատասխան բաժիններում):

Ուսումնասիրության շրջանակը կարող էր ներառել քրեական նոր օրենսդրությամբ սահմանված հոդվածները, որոնք նախատեսում են ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական կամ սեռական բռնության դեպքերը, այդ թվում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ, 195-րդ, 196-րդ, 198-րդ, 199-րդ, 171-րդ հոդվածները:

[7] Սույն ուսումնասիրության մեթոդաբանական հարցաշարն առավելապես հիմնված է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի «Կին իրավապաշտպանները քայլեր են ձեռնարկում Հայաստանում գենդերային բռնության դեմ» ծրագրի շրջանակում «Իրավունքի ուժ» ՀԿ-ի իրականացրած «Բռնության ենթարկված կանանց՝ արդարադատության մատչելիության իրավունքը ՀՀ-ում» զեկույցի վրա:

# 1. ԳԵՆԴԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

***Գենդերով[8] պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունները բռնության կամ խտրականության գործողություններ են անհատների կամ անձանց խմբի դեմ՝ ելնելով նրանց սեռից կամ գենդերային ինքնությունից[9]:*** Այս հանցագործությունները կարող են ներառել ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն, սեռական ոտնձգություն և խտրականության այլ ձևեր: Գենդերով պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների կարգավորումը մեծապես տարբերվում է ամբողջ աշխարհում, որտեղ երկրները և տարածաշրջանները որդեգրում են տարբեր մոտեցումներ նման հանցագործությունները սահմանելու, կանխելու և պատժելու համար:

Որոշ իրավական համակարգեր հատուկ անդրադառնում են անհատների դեմ հանցագործություններին՝ ելնելով նրանց սեռից (սովորաբար կենտրոնանալով կանանց վրա), մինչդեռ մյուսներն ընդլայնում են սահմանումը՝ ներառելով գենդերային ինքնությունը՝ դրանով իսկ ընդգրկելով տրանսգենդեր[10] և ոչ բինար անձանց[11] դեմ հանցագործությունները:

Գենդերով պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունները կարող են ընդգրկել հանցագործությունների լայն շրջանակ, ինչպիսիք են ֆիզիկական բռնությունը, սեռական ոտնձգությունը, ոտնձգությունը՝ ներառյալ առցանց, հետապնդումը: Որոշ դեպքերում ուղղակիորեն ճանաչվում են այնպիսի հանցագործություններ, ինչպիսին է ֆեմիցիդը (կնոջ սպանությունը նրա սեռի պատճառով):

Միջազգային և տարածաշրջանային մի շարք մարմիններ, այդ թվում՝ ՄԱԿ-ը և Եվրոպայի խորհուրդը, կոչ են արել նախատեսելու ավելի համապարփակ պաշտպանություն գենդերով պայմանավորված ատելության հիմքով հանցագործություններից: «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, օրինակ, հատուկ անդրադառնում է կանանց

[8] Գենդեր – *Մարդկանց առնականության և կանացիության ներքին ընկալումն է և փորձը, նաև հասարակական կառուցվածքը, որտեղ սահմանվում են որոշակի վարքագծեր տղամարդկանց և կանանց դերերի համար՝ կախված պատմությունից, հասարակություններից, մշակույթներից և դասակարգերից: Գենդերը կապված է հասարակության ակնկալիքների հետ և լոկ կենսաբանական հարց չէ* («Փինք» իրավապաշտպան ՀԿ, https://pinkarmenia.org/sexuality/gender-identity/):

[9] Գենդերային ինքնություն – *Անհատի կողմից իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ տրված սեռին: Այն սոցիալական ինքնության կատեգորիա է և վերաբերում է անհատի նույնականացմանը որպես տղամարդ, կին կամ այլ գենդեր* («Փինք» իրավապաշտպան ՀԿ, https://pinkarmenia.org/sexuality/gender-identity/):

[10] Տրանսգենդեր – *Այն անհատն է, որը ժամանակավորապես կամ մշտապես իրեն նույնականացնում է ծննդյան ժամանակ հաստատված գենդերից տարբերվող գենդերի հետ: Վերաբերում է այն անձանց, որոնք մշտապես ապրում են իրենց նախընտրած գենդերին համապատասխան, իսկ բժշկական միջամտության ենթարկվելը պարտադիր պայման չէ («Փինք» իրավապաշտպան ՀԿ,* https://pinkarmenia.org/sexuality/gender-identity/):

[11] Ոչ բինար անձ – *Մարդ, որի գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը պայմանական արական և իգական կատեգորիաների սահմաններից դուրս է: Այս մարդիկ կարող են իրենց գենդերը սահմանել որպես տղամարդու և կնոջ միջինացված գենդեր, կամ կարող են այն սահմանել այս եզրույթներից լիովին տարբերվող կերպով: Այս եզրույթը հոմանիշ չէ տրանս եզրույթին և պետք է օգտագործվի միայն այն դեպքում, եթե որևէ մեկն իրեն նույնականացնում է որպես ոչ բինար անձ («Փինք» իրավապաշտպան ՀԿ,* https://pinkarmenia.org/sexuality/gender-identity/):

նկատմամբ բռնությանը և ընտանեկան բռնությանը՝ պարտավորեցնելով անդամ երկրներին ընդունել «խիստ» օրենքներ:

Պետություններն ունեն տարբեր աստիճանի հատուկ օրենսդրություններ գենդերային հիմքով ատելության հանցագործությունների վերաբերյալ: Օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում «Ատելության հիմքով հանցագործությունների կանխարգելման մասին» օրենքը (2009 թ.) դաշնային կառավարությանը թույլ է տալիս հետապնդել ատելության հիմքով հանցագործությունները՝ հիմնված սեռի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության և հաշմանդամության վրա[12]:

ԵՄ անդամ երկրներում կառույցը խրախուսում է կիրառել ատելության հիմքով հանցագործության մասին օրենսդրություն, որն ընդգրկում է գենդերային բռնությունը, թեև դրանց առանձնահատկությունները տարբեր են ըստ երկրների: Որոշ երկրներ, ինչպիսիք են Շվեդիան և Իսպանիան, ունեն գենդերային բռնության վերաբերյալ խիստ օրենսդրություն:

## ՇՎԵԴԻԱ

Շվեդիայի «Խտրականության մասին» ակտը (Diskrimineringslagen), ընդունված 2009 թվականին, արգելում է խտրականությունը տարբեր հիմքերով՝ ներառյալ սեռի, գենդերային ինքնության և գենդերային արտահայտության[13]: Այն պահանջում է, որ գործատուները, կրթական հաստատությունները և պետական մարմինները ակտիվորեն աշխատեն խտրականությունը կանխելու և հավասար իրավունքներն ու հնարավորությունները խթանելու համար:

Շվեդիայի քրեական օրենսգիրքը (Brottsbalken) անդրադառնում է ատելության հիմքով հանցագործություններին՝ խստացնելով պատիժները ատելության դրդապատճառներով հանցագործությունների համար՝ ներառյալ սեռի, գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման հիմքով: Մասնավորապես.

> ***Գլուխ 29, Բաժին 2.*** այս բաժինը նախատեսում է ավելի խիստ պատիժներ, եթե պարզվի, որ հանցագործությունը պայմանավորված է անձի սեռի կամ գենդերային ինքնության նկատմամբ կողմնակալությամբ:
>
> ***Գլուխ 16, Բաժին 8.*** այս բաժինը վերաբերում է խմբի դեմ գործողությանը, որը ներառում է ատելության կամ բռնության հրահրում անհատների նկատմամբ՝ պայմանավորված նրանց սեռով կամ գենդերային ինքնությամբ:

Թեև գենդերով պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունները օրենսդրության մեջ հստակորեն տարանջատված չեն ատելության հիմքով այլ հանցագործություններից, սեռով և գենդերային ինքնությամբ ատելության շարժառիթի ընդգրկումը ատելության հիմքով հանցագործության դրույթներում երաշխավորում է, որ

---
[12] Տե՛ս United States Department of Justice. (2009). Matthew Shepard and James Byrd, Jr. Hate Crimes Prevention Act https://www.justice.gov/crt/matthew-shepard-and-james-byrd-jr-hate-crimes-prevention-act-2009-0
[13] Տե՛ս https://swedishgenderequalityagency.se/

հանցագործությունները՝ միսոգինիայի (կնատյացություն)[14], տրանսֆոբիայի[15] կամ այլ գենդերային հիմքով, հանգեցնում են առավել խիստ պատասխանատվության[16]։

Երկրում առկա են ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումներ, որոնք ձգտում են բարելավելու ատելության հիմքով հանցագործությունների հաղորդումները, հետաքննությունը և հետապնդումը՝ ապահովելով, որ նման դեպքերը ստանան անհրաժեշտ ուշադրությունը, և տրամադրվեն համաչափ ռեսուրսներ։

Շվեդիայի կառավարությունն ընդգծել է իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման կարևորությունը ատելության հիմքով հանցագործությունները բացահայտելու և քննությունը վարելու համար՝ ներառյալ գենդերային կողմնակալությամբ պայմանավորված հանցագործությունները։ Դասընթացները միտված են բարձրացնելու ոստիկանության զգայունությունն ու արդյունավետությունը գենդերային հիմքով բռնության զոհերի հետ աշխատելիս։

Շվեդիան տրամադրում է համապարփակ աջակցության ծառայություններ սեռով պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների զոհերին։ Սա ներառում է ***հոգեբանական աջակցություն, իրավական օգնություն և հետագա բռնության վտանգի տակ գտնվողների համար ապաստարանների հասանելիություն:*** Կառավարությունը համագործակցում է հասարակական կազմակերպությունների հետ՝ այս ծառայությունները տրամադրելու համար՝ ապահովելով, որ տուժածներին հնարավորինս հասանելի լինի անհրաժեշտ օգնությունը:

Բացի այդ՝ ջանքեր են գործադրվել նաև բարելավելու այն մեխանիզմները, որոնց միջոցով զոհերը կարող են հայտնել գենդերով պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների մասին։ Սա ներառում է ***անանուն հաղորդման տարբերակներ և հատուկ թեժ գծեր:***

Չնայած ամուր իրավական դաշտին՝ գենդերով պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների մասին հաղորդման հարցը դեռևս կարևոր խնդիր է Շվեդիայում։ Զոհերը կարող են չցանկանալ ներկայանալ իրավապահ մարմիններ՝ սոցիալական խարանից խուսափելու, արդարադատության համակարգի հանդեպ վստահության պակասի կամ իրենց չհավատալու մտավախության պատճառով:

Դեռևս կան շարունակական մարտահրավերներ՝ կապված գենդերի և գենդերային դերերի նկատմամբ խորապես արմատացած մշակութային վերաբերմունքի հետ։ Թեև Շվեդիան շատ առումներով առաջադեմ է, այնուամենայնիվ, կա որոշակի հասարակական վերաբերմունք, որը կարող է խթանել գենդերային հիմքով բռնության և ատելության հիմքով հանցագործությունները[17]:

---

[14] Միսոգինիա – *Ատելություն, հակակրանք կամ արմատացած կանխակալ վերաբերմունք կանանց հանդեպ (Oxford Dictionaries). https://web.archive.org/web/20171209203946/https://en.oxforddictionaries.com/definition/misogyny*

[15] Տրանսֆոբիա – *Բացասական մշակութային և անձնական համոզմունքներ, կարծիքներ, վերաբերմունք և վարքագծեր, որոնք հիմնված են տրանս անձանց կամ գենդերային ինքնության և գենդերային արտահայտումների վարիացիաների հանդեպ նախապաշարումների, զզվանքի, վախի և/կամ ատելության վրա («Փինք» իրավապաշտպան ՀԿ. https://pinkarmenia.org/wp-content/uploads/2024/05/lgbtreport2023hy.pdf):*

[16] Տե՛ս The Swedish Criminal Code. https://www.government.se/government-policy/judicial-system/the-swedish-criminal-code/

[17] Տե՛ս Hate Crime Investigation and Sentencing in Sweden: What Have We Learned in the Past 20 Years? https://link.springer.com/article/10.1007/s10610-023-09563-9

Ինչպես շատ երկրներում, այնպես էլ Շվեդիայում գենդերով պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունները հաճախ հատվում են խտրականության այլ ձևերի, օրինակ՝ ռասայական կամ սեռական կողմնորոշման հիմքով հանցագործությունների հետ: Սա կարող է բարդացնել նման հանցագործությունների իրավական և սոցիալական արձագանքը, քանի որ կարող են լինել բազմաթիվ կողմնակալ մոտեցումներ:

Շվեդիան շարունակում է բարեփոխել իր օրենսդրությունը՝ անհատներին գենդերային հիմքով բռնությունից և ատելության հիմքով հանցագործություններից ավելի լավ պաշտպանելու համար: Օրինակ՝ վերջին տարիներին առավել արդյունավետ պաշտպանություն է տրամադրվում տրանսգենդեր և ոչ բինար անձանց՝ ինչպես իրավական բարեփոխումների, այնպես էլ հանրային իրազեկման արշավների միջոցով:

Շվեդիայի կառավարությունը և ՀԿ-ները իրականացրել են արշավներ՝ բարձրացնելու գենդերով պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների մասին իրազեկվածությունը և խրախուսելու զոհերին հայտնել դեպքերի մասին: Այս արշավները հաճախ կենտրոնանում են նման հանցագործությունների հետևանքների և գենդերային բռնության դեմ պայքարելու կարևորության մասին հասարակությանը կրթելու վրա:

# ԻՍՊԱՆԻԱ

**Իսպանիայի** «Կանանց նկատմամբ բռնության դեմ պաշտպանության համապարփակ միջոցառումների մասին» օրենսդրությունը, որը հայտնի է որպես «Գենդերային բռնության օրենք» (*Ley Orgánica 1/2004 de Medidas de Protección Integral contra la Violencia de Género*), ընդունվել է 2004 թվականին և նախատեսում է համապարփակ միջոցներ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի համար[18]: Այն համարվում է Եվրոպայում գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի ամենաառաջադեմ իրավական կարգավորումներից մեկը: Օրենքը լայնորեն սահմանում է գենդերային հիմքով բռնությունը՝ ներառելով ինչպես ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնությունը, այնպես էլ տնտեսական բռնությունը:

Իսպանիայի քրեական օրենսգիրքը[19] ***(Հոդված 22(4))*** ներառում է սեռի, սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված դրդապատճառները հանցագործությունների ծանրացնող հանգամանքների շարքում: Այսինքն, եթե հանցագործությունը կատարված է գենդերի նկատմամբ ատելության հիմքով, ապա պատիժը կարող է ավելի խիստ լինել:

Քրեական օրենսգիրքը նաև հատուկ անդրադառնում է գենդերային հիմքով բռնությանը՝ ներառյալ ընտանեկան, և նախատեսում է ավելի խիստ պատիժներ ընտանեկան կամ ինտիմ հարաբերություններում կատարված հանցագործությունների համար *(Հոդվածներ 173 և 148):*

[18] Տե՛ս Organic Law 1/2004 of Comprehensive Protection Measures against Violence against women

[19] Տե՛ս The Criminal Code of Spain. https://legislationline.org/sites/default/files/documents/32/Spain_CC_am2013_en.pdf

Քրեական օրենսգիրքը նաև անդրադառնում է սեռի, սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով ատելության կամ բռնության հրապարակային հրահիրմանը: Սա ներառում է ինչպես առցանց, այնպես էլ այլ հարթակներում գործունեությունը, ընդ որում՝ Իսպանիան հատկապես խիստ դիրքորոշում է ցուցաբերում ատելության խոսքի նկատմամբ:

«Կանանց և տղամարդկանց միջև արդյունավետ հավասարության մասին» օրենքը (2007 թ.) ավելի է ամրապնդում գենդերային հավասարության նկատմամբ Իսպանիայի հավատարմությունը՝ անդրադառնալով ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի խտրականությանը և ընդգծելով գենդերային ինտեգրման կարևորությունը հանրային քաղաքականության մեջ[20]:

Իսպանիայում ստեղծվել են գենդերային բռնության մասնագիտացված դատարաններ *(Juzgados de Violencia sobre la Mujer),* որոնք զբաղվում են բացառապես գենդերային հիմքով բռնության գործերով[21]: Այս դատարանները քննում են քրեական գործերը, ինչպես նաև ընտանեկան իրավունքին առնչվող քաղաքացիական հարցեր, ինչպիսիք են խնամակալությունը և ամուսնալուծությունը, երբ առնչվում են գենդերային հիմքով բռնությանը:

Իսպանիայի ոստիկանական ուժերը՝ ներառյալ Քաղաքացիական գվարդիան և Ազգային ոստիկանությունը, ունեն հատուկ արձանագրություններ գենդերային հիմքով բռնության և ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի համար[22]: Սպաները ստանում են մասնագիտացված ուսուցում՝ այս դեպքերը զգայուն և արդյունավետ կերպով վարելու համար: Ոստիկանությունն ունի նաև գենդերային հիմքով բռնությանն առնչվող ստորաբաժանումներ՝ ապահովելով դեպքերի առաջնահերթությունը և մանրակրկիտ հետաքննությունը:

Իսպանիայում դատախազներին հանձնարարված է ակտիվորեն հետամուտ լինել գենդերային բռնության դեպքերին՝ կենտրոնանալով զոհերի պաշտպանության և պատշաճ քննության ապահովման վրա: Մասնագիտացված դատարանները նպաստում են պարզեցված գործընթացին, որտեղ դատավորները, դատախազները և ոստիկանները վերապատրաստված են՝ հաշվի առնելու գենդերային բռնության դեպքերի բարդությունները և առանձնահատկությունները:

Իսպանիան տրամադրում է զոհերի աջակցության համապարփակ ծառայություններ: Լայնածավալ աջակցության ծառայություններ են առկա գենդերային հիմքով բռնության զոհերի համար՝ ներառյալ *իրավաբանական օգնությունը, հոգեբանական*

---

[20] Տե՛ս Constitutional Act 3/2007 of 22 March for effective equality between women and men. https://www.coe.int/t/pace/campaign/stopviolence/Source/spain_constitutionalact3_2007_en.pdf

[21] Տե՛ս Juzgados de Violencia sobre la Mujer. https://www.poderjudicial.es/cgpj/es/Temas/Violencia-domestica-y-de-genero/Directorio-de-Juzgados-de-Violencia-y-Oficinas-de-ayuda/Juzgados-de-Violencia-sobre-la-mujer/Juzgados-de-Violencia-sobre-la-Mujer

[22] Մանրամասն տե՛ս **Spanish National Police.** (n.d.). *Página oficial de la Policía Nacional de España.* https://www.policia.es/_es/index.php; **Guardia Civil.** (n.d.). *Guardia Civil de España.* https://www.guardiacivil.es/ https://training.improdova.eu/en/national-frameworks-in-spain/

*խորհրդատվությունը և ապաստարանների տրամադրումը*: Այս ծառայությունները հասանելի են ամբողջ երկրում և հաճախ համակարգվում են տարածքային կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից: Սեռով պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների զոհերը իրավունք ունեն նաև պաշտպանական միջոցների, ինչպիսիք են «սահմանափակման հրամանները և շտապ բնակարանները»[23]:

Դեպքերի վերաբերյալ իրավապահ մարմիններին դիմելու մշակույթը խթանելու նպատակով Իսպանիան մշակել է գենդերային բռնության հաղորդման բազմաթիվ ուղիներ՝ ներառյալ *անանուն թեժ գծերը, առցանց հարթակները և դրանցում անմիջական մուտքը ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումներ*[24]: Կառավարությունը նաև իրազեկման արշավներ է սկսել՝ խրախուսելու զոհերին ներկայանալ և հայտնել հանցագործությունների մասին:

Չնայած ուժեղ իրավական դաշտին և օժանդակ ծառայություններին՝ մարտահրավերները դեռևս արդիական են[25]: Մշակութային գործոնները, կրկնազոհացումից վախը և իրավունքների մասին իրազեկվածության բացակայությունը նպաստում են ատելության հիմքով հանցագործությունների մասին իրավապահներին թերի զեկուցմանը:

Ատելության շարժառիթների ապացուցման բարդությունը ևս մարտահրավեր է ատելության հիմքով հանագործությունների դեմ արդյունավետ պայքարի համար: Գենդերային հիմքով հանցագործություններում ատելության դրդապատճառի ապացուցումը կարող է իրավաբանորեն դժվար լինել: Սա պահանջում է էական ապացույցներ, որ հանցագործությունը կատարված է եղել տուժողի սեռով կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված, ինչը կարող է դժվար լինել դատարանում հաստատել:

Հանցագործությունները, որոնք ներառում են բազմաթիվ կողմնակալ շարժառիթներ, ինչպիսիք են թե՛ սեռի և թե՛ էթնիկ պատկանելության հիմքով հանցագործությունները,

---

[23] Ծանոթագրություն. Սահմանափակման հրամանները կամ որոշումները (Restraining Orders) Իսպանիայի կողմից նախաձեռնվող պաշտպանական միջոցառումներից են, որ տրամադրվում են գենդերային հիմքով բռնություն վերապրած անձին: Այն դատարանի կողմից տրվող իրավական որոշում է, որի նպատակն է պաշտպանել բռնություն վերապրած անձանց բռնարարներից: Այն կարող է բռնարարին արգելել մոտենալ բռնություն վերապրած անձին կամ կապ հաստատել նրա հետ և ուղղված է հետագա բռնությունից կամ ոտնձգությունից խուսափելուն:
Շտապ բնակարանները (Emergency Housing) ժամանակավոր կացարաններ են, որոնք տրամադրվում են գենդերային հիմքով բռնության զոհերին՝ նրանց անմիջական պաշտպանության և ապահովության համար: Այս միջոցառումները նախատեսված են, որպեսզի օգնեն բռնություն վերապրած անձին՝ դուրս գալու բռնարար միջավայրից, և ապահովեն նրանց անվտանգությունը:
Ըստ էության, սույն միջոցառումները նման են Հայաստանում ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության օրենսդրական մեխանիզմներին, մասնավորապես՝ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների կիրառում, օրինակ՝ նախազգուշացում, անհետաձգելի միջամտության որոշման կամ պաշտպանական որոշման կայացում: Ինչպես նաև ապաստարանի (ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի հոգածության կենտրոն)՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց օրենքով սահմանված դեպքերում անվտանգ ժամանակավոր կացարանի տրամադրում:

[24] Ծանոթագրություն. Իսպանիայի Քաղաքացիական գվարդիան և Ազգային ոստիկանությունը հատուկ վերապատրաստված են գենդերային հիմքով բռնության դեպքերը վարելու համար: Բռնություն վերապրած անձինք կարող են աջակցություն ստանալ՝ բողոք ներկայացնել ուղղակիորեն ոստիկանության առցանց հարթակի կամ շտապ ծառայությունների միջոցով (օրինակ՝ 016 թեժ գիծ, նամակագրություն էլ. փոստով կամ հավելվածով և այլն) (մանրամասն տե՛ս https://violenciagenero.igualdad.gob.es/#)

[25] Տե՛ս Spanish criminal policy and the state pact on gender violence: a critical assessment. https://link.springer.com/article/10.1007/s43545-021-00141-6

կարող են հատկապես բարդ լինել քրեական հետապնդման համար:

Ատելության հիմքով հանցագործությունների կարգավորմանը վերաբերող հոդվածներում գենդերային ինքնության ներառումը արտացոլում է ավելի լայն հասարակական փոփոխություններ և կառավարության հանձնառությունը՝ գենդերային բռնությունից պաշտպանելու բոլոր քաղաքացիներին՝ ներառյալ տրանսգենդեր անձանց:

Վերջին օրենսդրական ջանքերը կենտրոնացած են ատելության հիմքով հանցագործությունների առցանց դրսևորումներից պաշտպանվածության ընդլայնման և գենդերային բռնության համար պատիժների խստացման վրա: Իսպանիայի կառավարությունը շարունակում է հարմարեցնել իր օրենքները՝ լուծելու առաջացող մարտահրավերները, ինչպիսիք են առցանց ոտնձգությունների աճը և առցանց ատելության խոսքը: Իսպանիայում գենդերային հավասարության մասին օրենսդրական նոր զարգացումները ողջունել են նաև ՄԱԿ-ի փորձագետները[26]:

## ՀՆԿԴԱՍՏԱՆ

**Հնդկաստանի** օրենսդրությունը, ինչպիսին են «Ընտանեկան բռնությունից կանանց պաշտպանության մասին» օրենքը (2005 թ.) և Հնդկաստանի քրեական օրենսգրքի հատուկ դրույթները, վերաբերում է գենդերային հիմքով հանցագործություններին, թեև ատելության հիմքով հանցագործության մասին օրենսդրությունը, որը հատուկ վերաբերում է սեռին, ավելի քիչ մշակված է[27]:

## ԿԱՆԱԴԱ

Իսկ **Կանադայում** կիրառվում են Մարդու իրավունքների ակտը և քրեական օրենսգիրքը, երկուսն էլ ապահովում են պաշտպանություն ատելության հիմքով, այդ թվում՝ սեռով պայմանավորված հանցագործություններից:

[26] Տե՛ս Spain: UN experts hail new feminist legislation. https://www.ohchr.org/en/press-releases/2023/02/spain-un-experts-hail-new-feminist-legislation

[27] Տե՛ս Women’s Rights in India; An Analytical Study. The United Nations Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women (CEDAW) The Indian Constitution, Legislations, Schemes, Policies & Judgements. https://nhrc.nic.in/sites/default/files/Women%E2%80%99s%20Rights%20in%20India%20complete_compressed.pdf

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գենդերով պայմանավորված ատելության հիմքով հանցագործության մասին իրավակարգավորումների արդյունավետ կիրարկումը հաճախ կախված է զեկուցման կայուն մեխանիզմներից և զոհերի աջակցության ծառայություններից: Գենդերով պայմանավորված ատելության հիմքով հանցագործության մասին առաջադեմ կանոնակարգեր ունեցող երկրները հաճախ ունեն ***ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումներ*** կամ հատուկ քննիչներ կամ դատախազներ՝ նման դեպքերը քննելու համար:

Չնայած գործող օրենքներին՝ գենդերով պայմանավորված ատելության հիմքով շատ հանցագործություններ չեն հաղորդվում *սոցիալական խարանի, հաշվեհարդարի, վախի կամ իրավապահների նկատմամբ վստահության բացակայության պատճառով:* Բացի այդ՝ նման հանցագործություններում «ատելության» տարրն ապացուցելը կարող է իրավաբանորեն դժվար լինել:

Սեռով պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների մասին հաճախ քիչ են հաղորդվում, ինչը դժվարացնում է դրանց իրական քանակը գնահատելը: Զոհերը կարող են վախենալ արձագանքից կամ չվստահել քրեական արդարադատության համակարգին:

Նույնիսկ արդյունավետ օրենքներ ունեցող երկրներում կիրարկումը կարող է անհամապատասխան լինել: Մշակութային առանձնահատկությունները, իրավապահ կամ դատական մարմինների աշխատակիցների պատրաստվածության ոչ բավարար մակարդակը կարող են խոչընդոտել ատելության հիմքով հանցագործության մասին օրենքների արդյունավետ կիրառումը:

Սեռով պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունները հաճախ հատվում են խտրականության այլ ձևերի, օրինակ՝ ռասայական, էթնիկ պատկանելության կամ սեռական կողմնորոշման հիմքով խտրականության հետ: Այս դեպքում կարող է բարդանալ իրավական գնահատականներ տալը և նման հանցագործությունների դեպքում ըստ էության պատասխանատվության ենթարկելը:

Նոր միտում է գենդերային շարժառիթով ատելության հիմքով հանցագործություններին անդրադառնալու անհրաժեշտությունը, մասնավորապես, տրանսգենդեր և ոչ բինար անձանց նկատմամբ: Որոշ երկրներ բարեփոխում են ատելության հիմքով հանցագործության մասին իրենց օրենքները՝ ավելի ներառական լինելու համար:

Առցանց ատելության խոսքի և ոտնձգությունների աճը, հատկապես սոցիալական հարթակներում կամ մեդիա տիրույթում, ստիպել է որոշ երկրների դիտարկել կամ ընդունել օրենքներ, որոնք հատուկ վերաբերում են սեռով պայմանավորված ատելության հիմքով առցանց հանցագործություններին:

Գենդերով պայմանավորված ատելության հիմքով հանցագործության մասին կանոնակարգերը գենդերային բռնության և խտրականության դեմ պայքարի ավելի լայն

ջանքերի կարևոր մասն են: Թեև առաջընթաց է գրանցվել աշխարհի շատ երկրներում, կիրառման, հասարակության վերաբերմունքի և իրավակարգավորումների առումով դեռևս կան զգալի մարտահրավերներ: Այս կանոնակարգերի ուժեղացումը և դրանց հետևողական կիրառման ապահովումը էական նշանակություն ունեն զոհերին պաշտպանելու և գենդերային հավասարությունը խթանելու համար:

## 1.1. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Կանանց նկատմամբ ֆիզիկական բռնությունը վերաբերում է ֆիզիկական ուժի դիտավորյալ կիրառմանը, որը կարող է վնաս, վնասվածք, հաշմանդամություն կամ նույնիսկ մահ պատճառել: Այն ներառում է վարքագծերի լայն շրջանակ, որոնք կարող են առաջանալ տարբեր համատեքստերում՝ ներառյալ ինտիմ, զուգընկերային հարաբերություններում, ընտանիքներում, համայնքներում կամ նույնիսկ պետական աշխատակիցների շրջանում[28]: Ֆիզիկական բռնությունը գենդերային բռնության ամենատարածված ու ճանաչելի ձևերից է և հաճախ կապված է հարկադիր վերահսկողության, գերակայության և գենդերային անհավասարության ավելի լայն ձևերի հետ[29]:

Կանանց նկատմամբ ֆիզիկական բռնությունը կարող է դրսևորվել տարբեր ձևերով՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով.

- *Հարվածներ, ապտակներ. ձեռքերի, ոտքերի կամ առարկաների օգտագործումը կնոջը հարվածելու համար՝ պատճառելով ցավ կամ վնասվածք:*
- *Պարանոցի կամ կոկորդի վրա ճնշում գործադրելը, որը կարող է հանգեցնել ծանր վնասվածքների կամ մահվան:*
- *Կրակի, տաք առարկաների կամ նյութերի օգտագործումը՝ մաշկի վրա այրվածքներ առաջացնելու համար:*
- *Ատամների օգտագործումը՝ ցավ կամ վնասվածք պատճառելու համար:*
- *Դանակների, ատրճանակների կամ այլ զենքերի օգտագործումը՝ վնաս պատճառելու կամ վնասվածք հասցնելու համար:*
- *Կնոջը ֆիզիկապես զսպելը նրա կամքին հակառակ, որը կարող է ներառել նրան կապելը, փակի տակ կամ որոշակի վայրում պահելը:*
- *Կնոջը ուժով հրելը կամ նրա վրա առարկաներ նետելը՝ վնաս պատճառելու մտադրությամբ[30]:*

[28] Տե՛ս Global and regional estimates of violence against women: Prevalence and health effects of intimate partner violence and non-partner sexual violence. WHO 2013. https://www.who.int/publications/i/item/9789241564625

[29] Տե՛ս Heise, L., & García-Moreno, C. (2002). Violence by intimate partners. In E. G. Krug, L. L. Dahlberg, J. A. Mercy, A. B. Zwi, & R. Lozano (Eds.), World report on violence and health. WHO, 87-121 https://pubmed.ncbi.nlm.nih.gov/12384003/

[30] Տե՛ս The World's Women 2015: Trends and Statistics. UN 2015. https://unstats.un.org/unsd/gender/downloads/WorldsWomen2015_report.pdf

Կանանց նկատմամբ ֆիզիկական բռնությունը կարող է կիրառվել տարբեր միջավայրերում և տարբեր անհատների կողմից, այդ թվում.

***Ինտիմ զուգընկերների.*** ամենատարածված հանցագործները ինտիմ զուգընկերներն են (ներկայիս կամ նախկին ամուսինները, զուգընկերը)։ Սա հաճախ կոչվում է ընտանեկան բռնություն կամ ինտիմ զուգընկերոջ կողմից բռնություն (Intimate partner violence)[31]։

***Ընտանիքի անդամների.*** ֆիզիկական բռնությունը կարող է գործադրվել նաև ընտանիքի այլ անդամների կողմից՝ ներառյալ ծնողների, քույրերի ու եղբայրների կամ մեծ ընտանիքի, հաճախ ընտանեկան վեճերի, «պատվի պաշտպանության» հիմքով բռնության կամ հարկադիր ամուսնությունների համատեքստում[32]։

***Համայնքի անդամների.*** որոշ դեպքերում ֆիզիկական բռնություն է գործադրվում համայնքի անդամների կողմից. օրինակ՝ հարևանների, ծանոթների կամ անծանոթների։ Սա կարող է ներառել սեռական ոտնձգություն, ոտնձգություն կամ բռնություն համայնքային կոնֆլիկտների ժամանակ[33]։

***Պետական դերակատարների՝*** *աշխատողների.* որոշ իրավիճակներում ֆիզիկական բռնություն է կիրառվում իրավապահների, զինվորական անձնակազմի կամ պետական այլ մարմինների ներկայացուցիչների կողմից։ Դա կարող է տեղի ունենալ ազատազրկման վայրերում, բողոքի ակցիաների ժամանակ կամ հակամարտության գոտիներում[34]։

Կանանց նկատմամբ ֆիզիկական բռնության ազդեցությունը խորն է և բազմակողմանի, որն ազդում է ոչ միայն զոհերի, այլև նրանց ընտանիքների և համայնքների վրա[35]։ Դրա հետևանքները կարող են լինել.

***Ֆիզիկական վնասվածքներ.*** կանայք կարող են տառապել մի շարք վնասվածքներից՝ կապտուկներից և կտրվածքներից մինչև կոտրված ոսկորներ, ներքին վնասվածքներ և երկարատև հաշմանդամություն։ Ծանր դեպքերում ֆիզիկական բռնությունը կարող է հանգեցնել մահվան[36]։

***Հոգեկան և էմոցիոնալ առողջություն.*** ֆիզիկական բռնությունը հաճախ ուղեկցվում է հոգեբանական տրավմայով, ինչը հանգեցնում է այնպիսի վիճակի կամ պայմանների, ինչպիսիք են դեպրեսիան, անհանգստությունը, հետտրավմատիկ սթրեսային խանգարումը և ինքնասպանության մտքերը[37]։

---

[31] Տե՛ս García-Moreno, C., et al. (2005). WHO multi-country study on women's health and domestic violence against women: Initial results on prevalence, health outcomes, and women's responses. WHO. https://iris.who.int/handle/10665/43309

[32] Տե՛ս Dobash, R. E., & Dobash, R. P. (2004). Women›s violence to men in intimate relationships. British Journal of Criminology, 44(3), 324-349. https://academic.oup.com/bjc/article-abstract/44/3/324/471260?redirectedFrom=fulltext

[33] Տե՛ս Watts, C., & Zimmerman, C. (2002). Violence against women: Global scope and magnitude. The Lancet, 359(9313), 1232-1237 https://pubmed.ncbi.nlm.nih.gov/11955557/

[34] Տե՛ս Amnesty International. (2004). It's in our hands: Stop violence against women. Amnesty International Publications. https://www.amnesty.org/en/wp-content/uploads/2021/08/act770012004en.pdf?ref=internet.exchangepoint.tech

[35] Տե՛ս Ellsberg, M., & Heise, L. (2005). Researching violence against women: A practical guide for researchers and activists. WHO https://www.amnesty.org/en/wp-content/uploads/2021/08/act770012004en.pdf?ref=internet.exchangepoint.tech

[36] Տե՛ս Campbell, J. C. (2002). Health consequences of intimate partner violence. The Lancet, 359(9314), 1331-1336 https://pubmed.ncbi.nlm.nih.gov/11965295/

[37] Տե՛ս Understanding and addressing violence against women: Health consequences. WHO 2012. https://iris.who.int/bitstream/handle/10665/77394/WHO?sequence=1

***Վերարտադրողական առողջություն.*** ֆիզիկական բռնությունը կարող է ծանր հետևանքներ ունենալ կնոջ վերարտադրողական առողջության վրա՝ հանգեցնելով ընդհուպ վիժումների, սեռական բռնության հետ համակցված լինելու պարագայում նաև անցանկալի հղիության, հղիության արհեստական ընդհատումների և սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (սեռավարակները)[38]:

***Սոցիալական և տնտեսական ազդեցություն.*** ֆիզիկական բռնության ենթարկված կանայք կարող են բախվել սոցիալական խարանի, մեկուսացման և տնտեսական դժվարությունների, հատկապես, եթե բռնությունը հանգեցնում է աշխատանքի կամ բնակարանի կորստի[39]:

Կանանց նկատմամբ ֆիզիկական բռնությունը հիմնված է գործոնների բարդ փոխազդեցության վրա՝ ներառյալ.

***Գենդերային անհավասարություն.*** հասարակական նորմերը, որոնք կնոջը համարում են տղամարդկանց ենթակա, նպաստում են բռնության և վերահսկողության մշակույթի ձևավորմանը[40]:

***Նահապետական մշակույթ.*** ընտանիքներում և հասարակություններում ավանդական իշխանության դինամիկան հաճախ տղամարդկանց իշխանություն է տալիս կանանց նկատմամբ, ինչը հանգեցնում է բռնության՝ որպես վերահսկողության միջոցի կիրառմանը[41]:

***Մշակութային նորմեր.*** որոշ մշակույթներում ֆիզիկական բռնությունը նորմալացում կամ հանդուրժվում է, հատկապես կանանց «խրատելու» կամ ընտանեկան պատիվը պահպանելու համատեքստում[42]:

***Տնտեսական կախվածություն.*** Բռնության ցիկլը կարող է շարունակվել, քանի որ կանայք, որոնք տնտեսապես կախված են իրենց (արական) զուգընկերներից, դժվարությամբ կարող են հեռանալ հարաբերություններից[43]:

***Իրավական պաշտպանության բացակայություն.*** ոչ համարժեք օրենքները կամ գործող օրենքների վատ կիրարկումը կարող են նպաստել կանանց նկատմամբ ֆիզիկական բռնության շարունակականությանը[44]:

---

[38] Տե՛ս García-Moreno, C., & Stöckl, H. (2009). Violence against women, its burden and interventions. Violence Against Women, 25(2), 206-219 https://www.researchgate.net/publication/7458323_Violence_Against_Women

[39] Տե՛ս Heise, L., & Ellsberg, M. (1999). Ending violence against women. Population Reports, Series L, No. 11. Baltimore: Johns Hopkins University School of Public Health, Population Information Program. https://www.researchgate.net/publication/287170875_Population_reports_Ending_violence_against_women

[40] Տե՛ս Jewkes, R., Levin, J., & Penn-Kekana, L. (2002). Risk factors for domestic violence: Findings from a South African cross-sectional study. Social Science & Medicine, 55(9), 1603-1617 https://pubmed.ncbi.nlm.nih.gov/12297246/

[41] Տե՛ս Connell, R. W. (2005). Masculinities (2nd ed.). Berkeley: University of California Press. https://lulfmi.lv/files/2020/Connell_Masculinities.pdf

[42] Տե՛ս Kimmel, M. S. (2002). «Gender symmetry» in domestic violence: A substantive and methodological research review. Violence Against Women, 8(11), 1332-1363 https://psycnet.apa.org/record/2002-06321-003

[43] Տե՛ս Dutton, D. G. (2007). Rethinking domestic violence. Vancouver: UBC Press. https://www.degruyter.com/document/doi/10.59962/9780774855112/html

[44] Տե՛ս Legal and Human Rights Centre. (2011). Tanzania human rights report 2011. LHRC. https://www.refworld.org/reference/annualreport/usdos/2012/en/86403

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կանանց նկատմամբ ֆիզիկական բռնության դեմ պայքարը պահանջում է պետության համապարփակ իրավական և սոցիալական արձագանքը, իսկ նրանց նկատմամբ ֆիզիկական բռնությունը քրեականացնող օրենսդրությունը՝ ներառյալ ընտանեկան բռնության մասին օրենքները, պետք է նախատեսեն արդյունավետ պաշտպանական միջոցներ, քրեական պատասխանատվություն և զոհերի աջակցության ծառայություններ:

Սոցիալական աջակցության ծառայությունները նույնպես պետք է համապարփակ լինեն, այդ թվում՝ ներառելով *կացարանների, խորհրդատվության, իրավաբանական օգնության և առողջապահական ծառայությունների հասանելիություն*, ինչը շատ կարևոր է ֆիզիկական բռնությունից վերապրածների համար:

Հանրության շրջանում իրազեկման արշավները ևս կարևոր են ֆիզիկական բռնության անընդունելի լինելու և կանանց իրավունքների մասին հասարակությանը կրթելու առումով, ինչը կարող է օգնել փոխելու մշակութային նորմերը և նվազեցնելու կանանց նկատմամբ բռնության հանդեպ հանդուրժողականությունը:

Պետական տարբեր գերատեսչությունների համագործակցությունը էական դեր ունի համակողմանի աջակցություն տրամադրելու և ամբողջական միջոցառումներ ձեռնարկելու համար. արդյունավետ արձագանքը հաճախ ներառում է իրավապահների, առողջապահական ծառայություններ մատուցողների, համայնքային, սոցիալական ծառայությունների և հասարակական կազմակերպությունների համագործակցություն՝ ապահովելու համակարգված և աջակցող մոտեցում բռնության դեմ պայքարում:

Այսպիսով՝ կանանց նկատմամբ ֆիզիկական բռնությունը մարդու իրավունքների կոպիտ խախտում է, որն ունի խոր արմատներ ունեցող պատճառներ և մեծ ազդեցություն: Այն պահանջում է բազմակողմանի մոտեցում, որը ներառում է արդյունավետ իրավական կարգավորումների շրջանակ, սոցիալական աջակցության համակարգեր, հանրային կրթություն և մեծաթիվ ջանքեր՝ ուղղված գենդերային անհավասարության և բռնության դեմ պայքարին: Միայն համապարփակ և համակարգված գործողությունների միջոցով կարելի է զգալիորեն նվազեցնել և ի վերջո վերացնել կանանց նկատմամբ ֆիզիկական բռնության տարածվածությունը:

# 1.2. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

***ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի*** 1-ին և 2-րդ հոդվածները հաստատում են ազատության, հավասարության և արժանապատվության իրավունքը, որն իր էությամբ հակադրվում է բռնության բոլոր ձևերին՝ ներառյալ սեռական բռնությանը: Մասնավորապես, վերջինս հռչակում է.

*«**Հոդված 1.***

*Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով:*

***Հոդված 2.***

*Յուրաքանչյուր մարդ պետք է ունենա սույն Հռչակագրում հռչակված բոլոր իրավունքներն ու ազատությունները առանց որևէ տարբերության, անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային, դասային և այլ վիճակից: Բացի այդ, չպետք է դրվի որևէ տարբերություն այն հիմունքով, թե ինչպիսին է այն երկրի կամ տարածքի, որին պատկանում է մարդը, քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակը, անկախ, խնամարկյալ, ոչ ինքնավար, թեև ինքնավարության մեջ որևէ այլ ձևով սահմանափակ»[45]:*

**Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան**[46] կողմերին պարտավորեցնում է վերացնել կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերը՝ ներառյալ բռնությունը: Թիվ 19 ընդհանուր հանձնարարականը, որն ընդունել է կոնվենցիայի հիման վրա գործող կոմիտեն, բացահայտորեն ճանաչում է գենդերային բռնությունը՝ ներառյալ սեռական բռնությունը՝ որպես խտրականության տեսակ, որը լրջորեն խոչընդոտում է կանանց իրավունքներն ու ազատությունները տղամարդկանց հետ հավասար հիմունքներով իրացնելու կարողությունը:

**ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին»** միջազգային **դաշնագիրը** (այսուհետև՝ ՔՔԻՄԴ)[47] ապահովում է քաղաքացիական և քաղաքական իրավունքների պաշտպանությունը: Դաշնագրի 7-րդ հոդվածն արգելում է խոշտանգումները, դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը, որը մեկնաբանվել է նաև որպես սեռական բռնության գործողություններ: Մարդու իրավունքների կոմիտեն, որը

[45] Տե՛ս United Nations. (1948). Universal Declaration of Human Rights. https://www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights

[46] Տե՛ս United Nations. (1979). Convention on the Elimination of All Forms of Discrimination Against Women. https://www.un.org/womenwatch/daw/cedaw/

[47] Տե՛ս United Nations. (1966). International Covenant on Civil and Political Rights. https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-covenant-civil-and-political-rights

վերահսկում է ՔՔԻՄԴ-ի իրականացումը, մեկնաբանել է գենդերային հիմքով բռնությունը՝ ներառյալ սեռական բռնությունը:

**Հռոմի ստատուտը**[48], որն ընդունել է Միջազգային քրեական դատարանը (ICC), առանցքային իրավական փաստաթուղթ է, որը դիտարկում է սեռական բռնությունը, սեռական ստրկությունը, հարկադիր մարմնավաճառությունը, հարկադիր հղիությունը, հարկադիր ստերջացումը և սեռական բռնության այլ ձևերը՝ որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, երբ դրանք կատարվում են համատարած կամ համակարգված՝ ցանկացած քաղաքացիական բնակչության դեմ: Այն նաև ճանաչում է այդ գործողությունները որպես ռազմական հանցագործություններ միջազգային կամ ներքին զինված հակամարտությունների համատեքստում:

**«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի մասին» կոնվենցիան** համապարփակ տարածաշրջանային պայմանագիր է[49], որն ուղղված է կանանց նկատմամբ բռնության կանխարգելմանը, զոհերին պաշտպանելուն և հանցագործներին հետապնդելուն: Այն սահմանում և քրեականացնում է կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերը՝ ներառյալ սեռական բռնությունը, և ընդգծում է գենդերային հավասարության և խտրականության բացառման կարևորությունը որպես հիմնարար սկզբունքներ: Կոնվենցիան իրավաբանորեն պարտադիր է Եվրոպայի խորհրդի անդամ երկրների համար:

Թեև միջազգային կանոնակարգերը ամուր շրջանակ են ապահովում կանանց նկատմամբ սեռական բռնության դեմ պայքարի համար, մի շարք մարտահրավերներ դեռևս շարունակում են խոչընդոտել սեռական բռնության կանխարգելումն ու դրա դեմ արդյունավետ պայքարը:

Այդպիսիք են.

- *Իրականացումը և կիրարկումը.* բազմաթիվ երկրներ ազգային մակարդակով ջանքեր են գործադրում՝ պայքարելու սեռական բռնության դեմ, սակայն դժվարություններ են ունենում միջազգային չափանիշների իրականացման հարցում՝ ռեսուրսների, քաղաքական կամքի կամ իրավական կանոնակարգերի բացակայության պատճառով:

- *Մշակութային և սոցիալական խոչընդոտները.* գենդերային արմատացած նորմերը և կանանց նկատմամբ հասարակության վերաբերմունքը կարող են խոչընդոտել սեռական բռնության դեմ օրենքների կիրարկումը:

- *Արդարադատության մատչելիությունը.* սեռական բռնությունից վերապրածները արդարադատությանը դիմելիս հաճախ բախվում են զգալի խոչընդոտների, այդ թվում՝ խարանի, վրեժխնդրության վախի և ոչ համարժեք իրավական աջակցության:

Միջազգային կանոնակարգերն ու շրջանակները զգալի առաջընթաց են գրանցել

[48] Տե՛ս International Criminal Court. (1998). Rome Statute of the International Criminal Court. https://www.icc-cpi.int/resourcelibrary/official-journal/rome-statute.aspx

[49] Տե՛ս Council of Europe. (2011). Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence (Istanbul Convention). https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/210

կանանց նկատմամբ սեռական բռնության դեմ պայքարում, սակայն այս միջոցառումների արդյունավետությունը կախված է ազգային մակարդակում կայուն իրականացումից և կիրարկումից: Շարունակական գլոբալ (ընդհանուր հասարակությանն ուղղված) քարոզչությունը, կարողությունների զարգացումը և հասարակական նորմերը փոխելու ջանքերը չափազանց կարևոր են՝ ապահովելու, որ այս միջազգային պարտավորությունները վերածվեն իրական պաշտպանության ամբողջ աշխարհում:

Կանանց նկատմամբ սեռական բռնության դեմ պայքարի լավագույն փորձի վերլուծությունը ներառում է տարբեր երկրների և կազմակերպությունների հաջողված ռազմավարությունների և նախաձեռնությունների դիտարկումը: Այս գործելակերպերը հաճախ կենտրոնանում են կանխարգելման, պաշտպանության, քրեական հետապնդման և վերապրածների աջակցության վրա՝ առաջարկելով սեռական բռնության դեմ պայքարի ամբողջական մոտեցում: Ստորև ուսումնասիրվել և ներկայացված է միջազգային փորձը, որը կարող է ճանաչվել որպես արդյունավետ տարբեր համատեքստերում:

**Իսլանդիան** հաճախ դիտարկվում է իր արդյունավետ իրավական դաշտի համար, որը նպաստում է գենդերային հավասարությանը և պայքարում է կանանց նկատմամբ բռնության դեմ: Երկրի օրենքները պահանջում են *հավասար վարձատրություն, աջակցություն սեռական բռնության ենթարկվածներին և խստագույն պատիժներ հանցագործների համար:* Իսլանդիայի «Գենդերային հավասարության ակտը», զուգորդված այնպիսի քաղաքականությամբ, ինչպիսին է «Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման ակտը», երաշխավորում է, որ սեռական բռնությունը համակարգված կերպով հասցեագրվի՝ կենտրոնանալով ինչպես կանխարգելման, այնպես էլ պատժի վրա[50]:

**Իսպանիան** կիրառել է համապարփակ օրենք՝ հատուկ գենդերային բռնության վերաբերյալ, որը ներառում է կանխարգելման, իրավական հետապնդման և զոհերի աջակցության լայնածավալ միջոցառումներ[51]: Այս օրենքն ընդգծում է սեռական բռնության դեպքերով զբաղվող մասնագետների իրազեկման, կրթության և մասնագիտացված վերապատրաստման կարևորությունը: Այն նաև ստեղծում է գենդերային բռնության համար մասնագիտացված դատարաններ՝ ապահովելով, որ գործերը վարվեն անհրաժեշտ փորձաքննությամբ և զգայունությամբ:

**Հարավաֆրիկյան Թութուզելայի** խնամքի կենտրոնները սեռական բռնությունից վերապրածների ինտեգրված աջակցության մոդել են[52]: Այս կենտրոնները տրամադրում են համապարփակ ծառայություններ՝ ներառյալ *բժշկական օգնություն, իրավական օգնություն և հոգեբանական աջակցություն*՝բոլորը մեկ վայրում: Հարավաֆրիկյան Թութուզելայի խնամքի կենտրոնները նախագծված են նվազեցնելու կրկնազոհերի թիվը՝

[50] Տե՛ս This is why Iceland ranks first for gender equality. https://www.weforum.org/agenda/2017/11/why-iceland-ranks-first-gender-equality/
[51] Տե՛ս Spain approves sweeping sexual violence protection bill: ‘We don’t want any woman to feel alone’. https://english.elpais.com/spain/2021-07-07/spain-approves-sweeping-sexual-violence-protection-bill-we-dont-want-any-woman-to-feel-alone.html
[52] Տե՛ս Thuthuzela Care Centres. https://www.gov.za/TCC

պարզեցնելով այն գործընթացը, որով անցնում են վերապրածները օգնություն փնտրելիս՝ ապահովելով, որ նրանք ստանան անհապաղ և համակարգված խնամք:

***Մեծ Բրիտանիայի*** սեռական ոտնձգությունների ուղղորդման կենտրոնների ցանցը առաջարկում է բազմակողմանի մոտեցում՝ զոհերին աջակցելու համար[53]: Կենտրոնները տրամադրում են անհետաձգելի բժշկական օգնություն, դատաբժշկական փորձաքննություններ, խորհրդատվություն և օգնություն ոստիկանությանը միջադեպերի մասին հայտնելու հարցում՝ բոլորը մեկ հարկի տակ: Այս մոդելը երաշխավորում է, որ վերապրածները ստանան ամբողջական աջակցություն, և որ ապացույցների հավաքումն իրականացվի անհապաղ և զգայուն կերպով:

***Սեռական բռնության կանխարգելման համար էական են նաև կրթության և իրազեկվածության բարձրացման միջոցառումները***: Այսպես, օրինակ.

***Ավստրալիայի*** «Our Watch – Աուըր Վոչ» նախաձեռնությունը կրթական և իրազեկման արշավների միջոցով կենտրոնանում է սոցիալական այնպիսի նորմերի փոփոխության վրա, որոնք թույլ են տալիս կանանց նկատմամբ բռնությունը[54]: Այն նպաստում է գենդերային հավասարությանը՝ մարտահրավեր նետելով ավանդական գենդերային դերերին և կարծրատիպերին՝ անդրադառնալով սեռական բռնության հիմնական պատճառներին: Նախաձեռնությունը գործում է դպրոցներում, աշխատավայրերում և համայնքներում՝ ընդգծելով սեռական բռնության կանխարգելման հարցում վաղ միջամտության և համայնքի ներգրավվածության կարևորությունը:

***Շվեդիան*** իրականացրել է սեռական դաստիարակության ամենաառաջադեմ և համապարփակ ծրագրերից մեկը աշխարհում[55]: Ուսումնական ծրագիրը ներառում է կրթություն համաձայնության, գենդերային հավասարության և հարաբերություններում հարգանքի վերաբերյալ՝ կանխելու սեռական բռնությունը՝ խրախուսելով հարգանքի և հավասարության մշակույթը վաղ տարիքից: Այս մոտեցումը ոչ միայն կրթում է երիտասարդներին իրենց իրավունքների մասին, այլև խրախուսում է նրանց մարտահրավեր նետել բռնությունը հավերժացնող վարքագծին և վերաբերմունքին:

*Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի մեխանիզմները կարող են առավել արդյունավետ դարձվել նաև նորարարական տեխնոլոգիաների շնորհիվ:* Այսպես.

*«Safe city – Սեյֆ սիթի» հավելվածը* օգտվողներին թույլ է տալիս անանուն հայտնել սեռական բռնության դեպքերի մասին՝ ստեղծելով վտանգավոր տարածքների քարտեզ[56]: Այս տվյալներն օգտագործվում են իրավապահ մարմիններին և համայնքային միջամտություններին տեղեկացնելու համար՝ օգնելով կանխելու հետագա միջադեպերը: Բջջային հավելվածները նաև ապահովում են ռեսուրսների և աջակցության

[53] Տե՛ս Sexual Assault Referral Centre (SARC). https://rapecrisis.org.uk/get-help/sexual-assault-referral-centres-sarcs/
[54] Տե՛ս https://www.ourwatch.org.au/about-us
[55] Տե՛ս Sweden: Comprehensive Sexuality Education. https://education-profiles.org/europe-and-northern-america/sweden/~-comprehensive-sexuality-education
[56] Տե՛ս https://webapp.safecity.in/

ծառայությունների հասանելիություն՝ փրկվածների համար հեշտացնելով օգնություն փնտրելը:

***Ավստրալիայի*** *«Legal Aid NSW – Լիգըլ Էյդ Էն Էս Դաբլյու»* կազմակերպությունը առցանց իրավական աջակցություն է տրամադրում սեռական բռնությունից վերապրածներին՝ առաջարկելով ռեսուրսներ, տեղեկատվություն և իրավաբանական խորհրդատվություն[57]: Այս հարթակը հատկապես արժեքավոր է վերապրածներին հասնելու համար, որոնք կարող են հասանելիություն չունենալ «ավանդական» իրավաբանական ծառայություններին (կազմակերպություններում կամ գրասենյակներում սովորաբար դեմ առ դեմ տրամադրվող խորհրդատվություններ կամ դատական ներկայացուցչություն և այլն), օրինակ՝ գյուղական վայրերում գտնվելու, սահմանափակ շարժունակության կամ այլ պատճառով:

*«White Ribbon – Սպիտակ ժապավենի արշավը»,* որը սկսվել է **Կանադայում** և ժամանակից ի վեր տարածվել է ամբողջ աշխարհում, տղամարդկանց և տղաներին ներգրավում է կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարում[58]: Արշավը կենտրոնանում է կրթության և իրազեկման վրա՝ խրախուսելով տղամարդկանց արտահայտվել սեռական բռնության դեմ և խթանել հարգալից հարաբերությունները: Թիրախավորելով տղամարդկանց վերաբերմունքն ու վարքագիծը, որոնք հաճախ նման բռնության հեղինակներ են՝ այս արշավն անդրադառնում է սեռական բռնության հիմնական պատճառներին:

***Ռուանդայի*** *«MenCare – Տղամարդկանց խնամք»* ծրագիրը աշխատում է տղամարդկանց և տղաների հետ՝ խթանելու գենդերային հավասարությունը և կանխելու կանանց նկատմամբ բռնությունը[59]: Ծրագիրը ներառում է սեմինարներ և համայնքային քննարկումներ, որոնք մարտահրավեր են նետում առնականության ավանդական պատկերացումներին և խրախուսում տղամարդկանց ակտիվ դերակատարում ունենալ գենդերային հավասարության խթանման գործում: Համայնքի վրա հիմնված այս մոտեցումն արդյունավետ է եղել սեռական բռնության դեպքերը նվազեցնելու և գենդերային դերերի նկատմամբ վերաբերմունքը փոխելու հարցերում:

---

[57] Տե՛ս https://www.legalaid.nsw.gov.au/
[58] Տե՛ս https://www.whiteribbon.ca/?lng=en
[59] Տե՛ս https://www.mencare.org/

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կանանց նկատմամբ սեռական բռնության դեմ պայքարի լավագույն փորձը բազմակողմանի է և առանձնահատուկ՝ ըստ համատեքստի, սակայն ունի ընդհանուր տարրեր՝ համապարփակ *իրավական կարգավորումների շրջանակներ, ինտեգրված աջակցության ծառայություններ, կրթություն և իրազեկում, մասնագիտացված վերապատրաստում, համայնքի ներգրավվածություն և տեխնոլոգիաների նորարարական կիրառում:* Հաջող ռազմավարությունները հաճախ ներառում են այս տարրերի համակցությունը՝ հարմարեցված յուրաքանչյուր տարածաշրջանի մշակութային, սոցիալական և իրավական համատեքստին:

Որպեսզի այս լավագույն փորձն արդյունավետ լինի նաև Հայաստանում, պետությունը պետք է դրսևորի քաղաքական ուժեղ կամք, տրամադրի համապատասխան ֆինանսավորում, իրականացնի շարունակական գնահատում և հանձնառություն ունենա ապահովելու համապատասխան հարմարեցումներ (duty to accomodate or reasonable accomodation) և հավասար հնարավորություններ հատուկ կարիքներ ունեցող անձանց կամ խոցելի խմբերի ներկայացուցիչների համար՝ անկախ նրանց սոցիալական, ֆիզիկական կամ այլ առանձնահատկություններից: Այս լավագույն փորձից սովորելով և այն կիրառելով՝ մեր երկիրն ու կազմակերպությունները կարող են զգալի հաջողությունների հասնել սեռական բռնության կանխարգելման, վերապրածներին աջակցելու և հանցագործներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

## 1.3. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոգեբանական բռնությունը ներառում է վարքագիծ, որի նպատակն է վախեցնել, վերահսկել, մեկուսացնել կնոջը կամ խաթարել նրա ինքնագնահատականը և ինքնավարության զգացումը: Այս վարքագծերը կարող են ներառել.

- *Վիրավորանք, նվաստացում և մշտական քննադատություն, որոնք նվազեցնում են կնոջ ինքնագնահատականը[60]:*
- *Կնոջը, նրա երեխաներին կամ սիրելիներին վնասելու սպառնալիք. սպառնում է խլել նրա երեխաներին կամ ինքնավնասման սպառնալիք՝ նրա վարքագիծը վերահսկելու համար[61]:*
- *Գործողություններ, ժեստեր կամ ձայնի տոնի օգտագործում, որոնք վախեցնում են կնոջը, օրինակ՝ գույք ոչնչացնելը, զենք ցուցադրելը կամ սպառնացող հայացքները[62]:*

[60] Տե՛ս Emotional Abuse: Signs, Examples, and Effects. https://www.talkspace.com/blog/emotional-abuse/
[61]Տե՛ս What is psychological violence? https://medicamondiale.org/en/violence-against-women/causes-and-consequences#:~:text=Psychological%20violence%20manifests%20itself%20as,the%20threat%20of%20taking%20children
[62] Տե՛ս Recognising domestic abuse. https://www.womensaid.org.uk/information-support/what-is-domestic-abuse/recognising-domestic-abuse/

- *Վերահսկել, թե ում կարող է կինը տեսնել, ուր կարող է գնալ կամ ինչ կարող է անել՝ նրան կտրելով ընկերների հետ շփումից, ընտանիքից և սոցիալական համակարգերից:*
- *Կնոջը մանիպուլյացնել՝ կասկածի տակ դնելով նրա իրականությունը, հիշողությունը կամ ընկալումները, ինչը հաճախ հանգեցնում է շփոթության, անհանգստության և վստահության կորստի:*
- *Վերահսկել կնոջ հասանելիությունը ֆինանսական ռեսուրսներին, թույլ չտալ նրան աշխատել կամ թույլ տալ՝ իշխանությունը պահպանելու համար:*
- *Վերահսկիչ վարքագիծ, որը ստեղծում է անհավասար ուժի դինամիկա հարաբերություններում՝ ստիպելով կնոջը թակարդում և անզոր զգալ:*

Հոգեբանական բռնությունը կարող է առաջանալ տարբեր միջավայրերում և հաճախ կիրառվում է հետևյալ անձանց կողմից.

***Ինտիմ զուգընկեր***. ինտիմ հարաբերություններում հոգեբանական բռնությունը բռնության տարածված ձև է, որը հաճախ օգտագործվում է ֆիզիկական բռնությանը զուգահեռ կամ դրա փոխարեն՝ վերահսկողություն գործադրելու համար[63]:

***Ընտանիքի անդամներ.*** ընտանիքի անդամները, ներառյալ ծնողները, քույր-եղբայրները կամ մեծ ընտանիքը, կարող են հոգեբանական բռնության ենթարկել, հատկապես հարկադիր ամուսնությունների, «պատվի վրա հիմնված» բռնության կամ ընտանեկան ավանդական դերերի հետ կապված դեպքերում[64]:

***Համայնքի անդամներ***. հոգեբանական բռնությունը կարող է կիրառվել նաև համայնքային միջավայրերում, ինչպիսիք են աշխատատեղերը կամ դպրոցները, որտեղ կանայք կարող են ենթարկվել ոտնձգությունների, ահաբեկման կամ խտրականության[65]:

***Պետական աշխատողներ.*** որոշ իրավիճակներում ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական բռնությունը կիրառում են պետական կառույցի աշխատակիցները, օրինակ՝ իրավապահ մարմինները կամ զինվորականները, հատկապես կալանավորման, հակամարտության կամ քաղաքական ռեպրեսիայի իրավիճակներում[66]:

***Կանանց վրա*** հոգեբանական բռնության ազդեցությունը խորն է և երկարատև, հաճախ ազդում է նրանց մտավոր, էմոցիոնալ և նույնիսկ ֆիզիկական բարեկեցության վրա[67]:

---

[63] Տե՛ս Johnson, M. R. (2019). Controlling and Coercive Behavior in Intimate Relationships: A Review of the Literature. Journal of Interpersonal Violence, 34(12), 2470-2493. https://link.springer.com/article/10.1177/0886260516675464
Tolin, D. F., & Foa, E. B. (2006). Sexual Violence: The Role of Psychological Trauma. Clinical Psychology Review, 26(1), 77-97 https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S0272735805000669

[64] Տե՛ս Gill, A. K. (2004). Forced Marriage and Honour-Based Violence. Kaukinen, C. (2013). The Impact of Coercive Control on Women's Well-Being. Journal of Family Violence, 28(2), 121-133.

[65] Տե՛ս Buchwald, E. (2005). Women's Rights as Human Rights: The International Women's Movement and the United Nations. Cortina, L. M., et al. (2013). Sexual Harassment and Gender Discrimination in the Workplace. Annual Review of Psychology, 64, 423-451.

[66] Տե՛ս Amnesty International. (2020). The State of the World's Human Rights.
Human Rights Watch. (2018). World Report 2018: Events of 2017.

[67] Տե՛ս Eisenberger, N. I., & Lieberman, M. D. (2004). Does Rejection Hurt? An fMRI Study of Social Exclusion. Science, 302(5643), 290-292. Evans, P. (2010). The Verbally Abusive Relationship: How to Recognize It and How to Respond.

Հետևանքները կարող են լինել.

***Հոգեկան առողջության խնդիրներ.*** հոգեբանական բռնությունը կարող է հանգեցնել հոգեկան առողջության ծանր վիճակների, ինչպիսիք են դեպրեսիան, անհանգստությունը, հետտրավմատիկ սթրեսային խանգարումը և ինքնասպանության մտքերը կամ վարքագիծը:

***Զգացմունքային անհանգստություն.*** հոգեբանական բռնության հետևանքով կանայք կարող են զգալ վախի, ամոթի, մեղքի և թերարժեքության քրոնիկ զգացումներ[68]:

*Ֆիզիկական առողջության խնդիրներ.* հոգեբանական բռնության հետևանքով առաջացած քրոնիկական սթրեսը և հուզական անհանգստությունը կարող են դրսևորվել ֆիզիկական առողջության խնդիրներով՝ ներառյալ գլխացավերը, ստամոքս-աղիքային խնդիրները, քնի խանգարումները և թուլացած իմունային համակարգը[69]:

*Սոցիալական և տնտեսական ազդեցություն.* հոգեբանական բռնության ենթարկված կանայք կարող են մեկուսացվել սոցիալական ցանցերից, կորցնել վստահությունն իրենց աշխատունակության նկատմամբ և բախվել աշխատանքի կամ տնտեսական անկախության պահպանման դժվարությունների[70]:

*Ազդեցությունը երեխաների վրա.* եթե ընտանիքում երեխաները ենթարկվում են հոգեբանական բռնության, նրանք կարող են տառապել հուզական և վարքային խնդիրներից, ինչը կարող է հանգեցնել բռնության ցիկլի, որը կարող է շարունակվել սերնդեսերունդ[71]:

Կանանց նկատմամբ հոգեբանական բռնությունը, ինչպես գենդերային բռնության այլ ձևերը, հիմնված են բարդ սոցիալական, մշակութային և տնտեսական գործոնների վրա: Օրինակ.

Հասարակական նորմերը և համոզմունքները, որոնք տղամարդկանց իշխանություն են տալիս կանանց նկատմամբ, նպաստում են հոգեբանական բռնության նորմալացմանն ու շարունակականությանը[72]:

Ավանդական նահապետական արժեքները հաճախ արդարացնում են վերահսկող վարքը և հուզական բռնությունը՝ որպես տղամարդու գերակայությունը և կանանց ենթակայությունը պահպանելու միջոց[73]:

Որոշ մշակույթներում հոգեբանական բռնությունը հանդուրժվում կամ նույնիսկ թույլատրվում է որպես կանանց վերահսկողության օրինական միջոց, հատկապես ընտանիքում[74]:

---

[68] Տե՛ս Tolin, D. F., & Foa, E. B. (2006). Sexual Violence: The Role of Psychological Trauma. Clinical Psychology Review, 26(1), 77-97. Wolf, E. S. (1999). The Emotional Abuse of Women: Causes and Consequences.

[69] Տե՛ս Sapolsky, R. M. (2004). Why Zebras Don't Get Ulcers: An Updated Guide to Stress, Stress-Related Diseases, and Coping. Glover, V. (2011). The Effects of Stress on the Developing Brain.

[70] Տե՛ս Hovey, J. D. (2000). Psychological Distress Among Mexican Immigrant Women. Journal of Community Psychology, 28(3), 291-303.
Dutton, M. A., & Goodman, L. A. (2005). Coercion in Intimate Partner Violence.

[71] Տե՛ս Margolin, G., & Gordis, E. B. (2004). The Effects of Domestic Violence on Children: A Review of the Literature. Journal of Clinical Child and Adolescent Psychology, 33(3), 259-269.
Edleson, J. L. (2006). Children's Exposure to Domestic Violence.

[72] Տե՛ս Connell, R. W. (2005). Masculinities (2nd ed.). University of California Press

[73] Տե՛ս Walby, S. (1990). Theorizing Patriarchy. Blackwell Publishing.

[74] Տե՛ս Hunnicutt, G. (2009). Varieties of Patriarchy and Violence Against Women: Resurrecting "Patriarchy" as a Theoretical Tool.

Կանայք, որոնք ֆինանսապես կախված են իրենց զուգընկերներից, կարող են ավելի խոցելի լինել հոգեբանական բռնության նկատմամբ, քանի որ ավելի քիչ ռեսուրսներ ունեն չարաշահող, նվաստացուցիչ հարաբերություններից խուսափելու համար[75]:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հոգեբանական բռնության դեպքերում կանայք հաճախ ոստիկանություն հաղորդում չեն ներկայացնում, իսկ իրավապահ մարմինների ներկայացուցիչները նման դեպքերը բավարար ուշադրության չեն արժանացնում: Այսպիսի իրավիճակ լինում է մասամբ այն պատճառով, որ հոգեբանական բռնության դեպքերում կանանց վրա տեսանելի (ֆիզիկական)՝ բռնության հետքեր չեն երևում, կամ այդպիսի իրավիճակները հաճախ կարգավորվում են ամուսնաընտանեկան կամ զուգընկերային հարաբերություններում, և կանայք չեն դիմում իրավական պաշտպանության:

Կանանց նկատմամբ հոգեբանական բռնության դեմ պայքարը պահանջում է բազմակողմանի մոտեցում, որը ներառում է ոչ միայն իրավական բարեփոխումներ, այլև սոցիալական աջակցության ծառայություններ և հանրային իրազեկման արշավներ:

Շատ երկրներ սկսել են հոգեբանական բռնությունը ճանաչել որպես հանցագործություն և ներառել այն ընտանեկան բռնության մասին իրենց օրենսդրությունում: Պաշտպանության իրավական շրջանակը ներառում է կարգավորումներ պաշտպանական միջոցների, քրեական հետապնդման և հանցագործների պատիժների վերաբերյալ:

Հոգեբանական բռնության զոհերին անհրաժեշտ է օգտվել մասնագիտացված աջակցության ծառայություններից՝ ներառյալ խորհրդատվությունից, իրավաբանական օգնությունից և ապահով կացարանից: Այս ծառայություններն օգնում են կանանց ապաքինվելու ոտնձգության տրավմայից և վերականգնելու իրենց ինքնավարությունը: Սակայն որոշ երկրներում՝ ներառյալ Հայաստանում, պետության կողմից նման ամբողջական մասնագիտացված ծառայություններ և աջակցություն չեն տրամադրվում:

Միաժամանակ, կրթության և իրազեկման արշավները կարևոր նշանակություն ունեն հոգեբանական բռնության նկատմամբ հասարակության վերաբերմունքը փոխելու և տուժածներին օգնության տրամադրումը խրախուսելու համար: Այս արշավները հաճախ կենտրոնանում են հոգեբանական բռնության նույնականացման միջոցների և իրազեկելու վրա, որ դա բռնության լուրջ և անընդունելի ձև է:

Իրավապահ մարմինների աշխատակիցները, առողջապահական ծառայություններ մատուցողները և սոցիալական աշխատողները կարիք ունեն վերապատրաստման՝ հոգեբանական բռնությունը ճանաչելու և դրան արդյունավետ արձագանքելու համար, քանի որ, ֆիզիկական բռնության համեմատ, այն բացահայտելն ու ապացուցելը կարող է ավելի

---

Violence Against Women, 15(5), 553-573.

[75] Stˊu Kaukinen, C. (2004). Economic Factors and Domestic Violence: Evidence from the National Violence Against Women Survey. Journal of Family Violence, 19(2), 133-144.

դժվար լինել:

Կանանց նկատմամբ հոգեբանական բռնությունը բռնության համատարած ձև է, որը կարող է կործանարար ազդեցություն ունենալ կնոջ մտավոր և էմոցիոնալ բարեկեցության վրա: Այն հաճախ միահյուսվում է բռնության այլ ձևերի հետ և օգտագործվում է որպես հարաբերությունների և հասարակությունների ներսում վերահսկողության և ճնշման գործիք: Հոգեբանական բռնության դեմ պայքարը պահանջում է համապարփակ իրավական միջոցներ, արդյունավետ աջակցության համակարգեր և մշակութային վերաբերմունքի փոփոխություն՝ գենդերային բռնության այս ձևը ճանաչելու և դրա դեմ պայքարելու համար: Հոգեբանական բռնության բարդությունների և ազդեցության ըմբռնումը կարևոր է արդյունավետ միջամտություններ մշակելու և վերապրածներին աջակցելու համար:

## 1.4. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական բռնությունը սահմանվում է որպես բռնության ձև, երբ զուգընկերներից մեկը վերահսկում է մյուսի տնտեսական ռեսուրսների հասանելիությունը՝ սահմանափակելով ինքնաաջակցման նրա կարողությունը և ստիպելով նրան ֆինանսապես կախված լինել բռնարարից: Սա կարող է ներառել նաև այնպիսի վարքագծեր, ինչպիսիք են տուժողի համար ֆինանսական միջոցների հասանելիությունը վերահսկելը, նրան աշխատել արգելելը, սաբոտաժը կամ պարտքերի պարտադրումը:

Ըստ ՄԱԿ-ի՝ տնտեսական բռնությունը ներառում է «գործողություններ, ինչպիսիք են միջոցների տրամադրման մերժումը, ֆինանսական ներդրումներից հրաժարումը, սննդի և հիմնական կարիքների մերժումը և առողջապահական խնամքի, աշխատանքի հասանելիության վերահսկումը և այլն՝ զոհի համար տնտեսական կախվածություն և ենթակայություն ստեղծելու նպատակով»[76]:

***«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան*** (CEDAW) ՄԱԿ-ի պայմանագիր է, որը վավերացրել են 189 երկրներ: Այն պարտավորեցնում է պետություններին վերացնել կանանց նկատմամբ խտրականությունը՝ ներառյալ տնտեսական ոլորտում: Կոնվենցիայի թիվ 19 ընդհանուր հանձնարարականում տնտեսական բռնությունը բացահայտորեն նշվում է որպես գենդերային բռնության ձև:

***Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի մասին» կոնվենցիան*** ամենաընդգրկուն միջազգային պայմանագրերից է, որը վերաբերում է կանանց նկատմամբ բռնությանը՝ ներառյալ տնտեսական բռնությանը: Այն պարտավորեցնում է, որ անդամ պետությունները ձեռնարկեն օրենսդրական և այլ միջոցներ՝ պաշտպանելու բռնության ենթարկվածների իրավունքները՝ ֆինանսական աջակցություն ստանալու և տնտեսական չարաշահումներից զերծ մնալու

[76] Տե՛ս Handbook for national action plans on violence against women, UN Women 2012. https://www.unwomen.org/sites/default/files/Headquarters/Attachments/Sections/Library/Publications/2012/7/HandbookNationalActionPlansOnVAW-en%20pdf.pdf

համար:

*ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ)* վերաբերում են տնտեսական բռնություններին՝ քարոզելով անհավասարությունը նվազեցնելու և խոցելի խմբերին հզորացնող քաղաքականություն, ինչն արտացոլված է ԿԶՆ 10-րդ նպատակի մեկնաբանություններում՝ տնտեսական անհավասարությունը նվազեցնելու, ԿԶՆ 8-րդ նպատակի մեկնաբանություններում՝ ներառական տնտեսական աճի, և ԿԶՆ 5-րդ նպատակի մեկնաբանություններում՝ գենդերային հավասարության ապահովման մասով:

***ՄԱԿ-ի տարբեր հատուկ զեկուցողներ*** ընդգծել են տնտեսական բռնության դեմ պայքարի անհրաժեշտությունը, հատկապես՝ աղքատության դեմ պայքարի, բնակարանների հասանելիության և բնիկ ժողովուրդների իրավունքների ապահովման համատեքստում: Նրանք խորհուրդ են տալիս պետություններին մշակել օրենքներ և քաղաքականություն, որոնք պաշտպանում են տնտեսական շահագործումից և ապահովում են ռեսուրսների արդար բաշխումը:

Բռնության այս տեսակը ճանաչվում է որպես գենդերային հավասարության և կանանց հզորացման զգալի խոչընդոտ ամբողջ աշխարհում: Ահա կանանց նկատմամբ տնտեսական բռնության վերաբերյալ միջազգային իրավակարգավորումների վերլուծությունը.

Այնպիսի երկրներ, ինչպիսիք են Իսպանիան, Շվեդիան և Կանադան, տնտեսական բռնությունը ներառել են գենդերային բռնության դեմ ավելի լայն օրենսդրության մեջ: Այս օրենքները տնտեսական բռնությունը ճանաչում են որպես ընտանեկան բռնության ձև՝ այն պատժելի դարձնելով օրենքով:

Օրինակ՝ Իսպանիայի «Կանանց նկատմամբ բռնության դեմ պաշտպանական համապարփակ միջոցառումների մասին օրենքը (*Ley Orgánica 1/2004 de Medidas de Protección Integral contra la Violencia de Género*)[77] տնտեսական բռնությունը ներառում է որպես ընտանեկան բռնության կատեգորիա[78]:

**Շվեդիայում** տնտեսական բռնությունը քննարկվում է ընտանեկան բռնության և գենդերային բռնության ավելի լայն համատեքստում: Տնտեսական բռնությունը հասցեավորվում է մի քանի հիմնական իրավական կարգավորումների ներքո, որոնք վերաբերում են ընտանեկան բռնությանը և հարկադիր վերահսկողությանը:

Տնտեսական բռնության վերաբերյալ առաջնային օրենքներից մեկը Շվեդիայի քրեական օրենսգիրքն է (Brottsbalken), որը ներառում է դրույթներ ընտանեկան բռնության տարբեր ձևերի վերաբերյալ՝ ներառյալ ֆինանսական և տնտեսական վերահսկողությունը՝ որպես «կանանց ամբողջականության կոպիտ ոտնահարման» մաս (Grov kvinnofridskränkning): Այս օրենքը բռնությունների կրկնվող գործողությունները՝ ներառյալ տնտեսական բռնությունը, ճանաչում է որպես ծանր հանցագործություն[79]:

---

[77] Տե՛ս Organic Law 1/2004 of Comprehensive Protection Measures against Violence against women
[78] Տե՛ս National frameworks in Spain. https://training.improdova.eu/en/national-frameworks-in-spain/
[79] Տե՛ս The Swedish Criminal Code. https://www.government.se/government-policy/judicial-system/the-swedish-criminal-code/

**Կանադայում** տնտեսական բռնությունը ճանաչվում է որպես ընտանեկան բռնության տեսակ ավելի լայն օրենսդրական շրջանակներում, մասնավորապես՝ ամուսնալուծության մասին օրենքի և տարբեր ոլորտային օրենսդրական ակտերի միջոցով: Թեև չկա հատուկ առանձին օրենք միայն տնտեսական բռնության վերաբերյալ, այս օրենքներում ներառված են դրույթներ՝ ուղղված ֆինանսական չարաշահումները վերացնելուն և զոհերի տնտեսական անվտանգությունն ապահովելուն[80]:

Շատ իրավական համակարգերում ընտանեկան օրենսդրությունը բարեփոխվում է, որպեսզի կանայք պաշտպանվեն ամուսնության և ամուսնալուծության ժամանակ տնտեսական բռնությունից: Օրինակ՝ **Ավստրալիայի** ընտանեկան օրենսգիրքը ներառում է դրույթներ, որոնք վերաբերում են տնտեսական բռնությանը՝ ապահովելով գույքի արդար բաժանումը և ֆինանսական աջակցությունը ամուսնալուծությունից հետո[81]:

Որոշ երկրներ, ինչպիսիք են Միացյալ Թագավորությունը և Ֆրանսիան, մշակել են գենդերային բռնության վերաբերյալ գործողությունների ազգային ծրագրեր, որոնք ներառում են տնտեսական բռնության դեմ պայքարի հատուկ միջոցներ: Այս ծրագրերը հաճախ ենթադրում են համակարգում բազմաթիվ ոլորտներում և վերահսկողություն տարբեր մարմինների կողմից՝ներառյալ իրավապահ մարմինների, սոցիալական ծառայությունների և ֆինանսական հաստատությունների:

**Միացյալ Թագավորությունում** կառավարությունը, որպես կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեմ պայքարի ավելի լայն ռազմավարությունների մաս, իրականացրել է գործողությունների ծրագրեր ընտանեկան բռնության և տնտեսական բռնությունների դեմ պայքարելու համար: Այս ջանքերն արտացոլող հիմնական փաստաթուղթը «Կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեմ պայքարի ռազմավարությունն» է, որը ներառում է տնտեսական բռնությունների դեմ միջոցառումներ[82]: Բացի այդ՝ 2021 թվականի ընտանեկան բռնության մասին օրենքը կարևոր օրենսդրական կարգավորում է, որը ճանաչում է տնտեսական բռնությունը՝ որպես ընտանեկան բռնության տեսակ: Այն Միացյալ Թագավորության իրավական արձագանքի մաս է՝ ուղղված տնտեսական բռնությանը և հարկադիր վերահսկողությանը:

Այս փաստաթղթերը ուրվագծում են Միացյալ Թագավորության կառավարության հանձնառությունը՝ պայքարելու բռնությունների տարբեր ձևերի՝ ներառյալ տնտեսական բռնության դեմ, ինչպես քաղաքականության, այնպես էլ օրենսդրական միջոցներով:

**Ֆրանսիայում** կառավարությունն իրականացրել է ազգային գործողությունների ծրագրեր՝ պայքարելու կանանց նկատմամբ բռնության՝ ներառյալ տնտեսական բռնության դեմ: Ամենավերջին և համապարփակ ծրագիրը «Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի 2017-2019 թթ. հինգերորդ միջգերատեսչական

[80] Տե՛ս Divorce Act R.S.C., 1985, c. 3 (2nd Supp.) https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/d-3.4/
[81] Տե՛ս Family Law Act 1975. https://www.legislation.gov.au/C2004A00275/latest/text
[82] Տե՛ս Policy paper: Tackling violence against women and girls strategy. https://www.gov.uk/government/publications/tackling-violence-against-women-and-girls-strategy

ծրագիրն» է[83]: Այս ծրագիրը նախանշում է տարբեր միջոցառումներ՝ ուղղված կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերին՝ ներառյալ տնտեսական բռնությանը: Այն ներառում է ռազմավարական գործողությունների լայն շրջանակ, ինչպիսիք են իրավական բարեփոխումները, հանրային իրազեկման արշավները և օժանդակ ծառայությունները, որոնք ուղղված են կանանց տնտեսական բռնությունից և բռնության այլ ձևերից պաշտպանելուն:

Շատ կառավարություններ և միջազգային կազմակերպություններ իրականացնում են կանանց ֆինանսական գրագիտության, վարկերի հասանելիության և ձեռներեցության հնարավորությունների բարձրացմանն ուղղված ծրագրեր: Համաշխարհային բանկի Գենդերային հավասարության ռազմավարությունը[84] և ՄԱԿ-ի Կանանց նախաձեռնությունները կենտրոնացած են տնտեսական բռնության նկատմամբ կանանց խոցելիության նվազեցման վրա՝ բարձրացնելով նրանց տնտեսական ինքնավարությունը:

Տնտեսական բռնության դեմ պայքարի համատեքստում շատ կարևոր են պետությունների աջակցման ծառայությունները, մասնավորապես՝ *ապաստարանները և թեժ գծերը:* Որոշ երկրներում, ինչպիսիք են, օրինակ, Գերմանիան[85] և Միացյալ Նահանգները, ընտանեկան բռնությունից վերապրածների համար նախատեսված ապաստարանները հաճախ մասնագիտացված ծառայություններ են մատուցում տնտեսական բռնության զոհերին: Սա ներառում է ***ֆինանսական խորհրդատվություն, իրավական խորհրդատվություն տնտեսական իրավունքների վերաբերյալ և աջակցություն երեխայի խնամքի կամ ալիմենտի ապահովման հարցում:***

Որոշ երկրներում առկա է նաև կանանց տնտեսական բռնության ենթարկվելուց հետո ֆինանսական անկախությունը վերականգնելուն ուղղված նախաձեռնություններ: Օրինակ՝ Միացյալ Նահանգներն ունի «Տնտեսական հզորացման ծրագիր» ապաստարաններում, որն առաջարկում է ուսուցում, ֆինանսական պլանավորում և միկրովարկերի հասանելիություն:

Տնտեսական բռնության կանխարգելման համատեքստում որպես մարտահրավեր և բացթողում կարելի է դիտարկել իրավակարգավորումների կիրառման հարցը: Չնայած իրավական հիմքերի առկայությանը՝ կիրարկումը դեռևս խնդիր է: Շատ երկրներում տնտեսական բռնությանն առնչվող օրենսդրությունն արդյունավետորեն չի կիրառվում իրազեկվածության, իրավապահ մարմինների ոչ պատշաճ պատրաստվածության և գենդերային բռնությունը հանդուրժող մշակութային նորմերի պատճառով:

Տնտեսական բռնությունը հաճախ հատվում է խտրականության այլ ձևերի հետ՝ ռասայական, կրոնական և այլն: Օրինակ՝ *միգրանտ կանայք կամ հաշմանդամություն ունեցող կանայք* կարող են ավելի խոցելի լինել տնտեսական բռնության նկատմամբ և բախվել օժանդակ ծառայություններից օգտվելու լրացուցիչ խոչընդոտների:

---

[83]Տե՛ս 4th inter-ministerial plan for the prevention and the fight against violence against women 2014 – 2016. https://www.euromedwomen.foundation/pg/en/documents/view/6940/4th-interministerial-plan-for-prevention-and-fight-against-violence-against-women-2014-2016

[84] Տե՛ս https://www.worldbank.org/en/topic/gender/brief/gender-strategy-update-2024-30-accelerating-equality-and-empowerment-for-all

[85] Տե՛ս Family Policy in Germany. https://link.springer.com/chapter/10.1007/978-1-4614-6771-7_10

Պետք է նշել, որ առկա է տնտեսական բռնության վերաբերյալ համապարփակ տվյալների զգալի պակաս: Սա խոչընդոտում է խնդրի ամբողջական շրջանակը հասկանալու և նպատակային քայլեր մշակելու ջանքերը: Այնուամենայնիվ, որոշ երկրներ, օրինակ՝ Կանադան և Ավստրալիան, սկսել են ներառել տնտեսական բռնության ցուցանիշները կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ իրենց ազգային հարցումներում:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կանանց նկատմամբ տնտեսական բռնությանն առնչվող միջազգային պրակտիկան ցույց է տալիս այս խնդրի ճանաչումը գենդերային բռնության ավելի լայն համատեքստում: Թեև որոշ երկրներ զգալի առաջընթաց են գրանցել տնտեսական բռնության դեմ պայքարում օրենսդրության, քաղաքականության շրջանակների և աջակցության ծառայությունների առումով, դեռևս առկա են մարտահրավերներ, հատկապես կիրարկման մոտեցումներում: Միջազգային շարունակական ջանքերը, որոնք հիմնված են հետազոտությունների վրա և առաջնորդվում են միջազգային չափանիշներով, ինչպիսիք են «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան և «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի մասին» կոնվենցիան, կարևոր են տնտեսական բռնության դեմ արդյունավետ պայքարի և գենդերային հավասարության խթանման համար:

# 2. ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2021 թվականին ընդունվել և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ քրեական նոր օրենսգիրքը, որը նախատեսում է նախկինում առկա հոդվածների փոփոխություններ կամ նոր հանցակազմերի ներառում, որոնք միտված են ընդլայնելու քրեորեն պատժելի արարքների շրջանակը կամ որոշակիացնելու արարքների համար նախատեսված քրեական պատասխանատվությունը: Չնայած նրան, որ ընտանեկան բռնությունը, որպես այդպիսին, առանձնացված չէ քրեական օրենսգրքում որպես առանձին հանցատեսակ կամ հանցակազմերի խումբ, որը կնախատեսեր առավել ծանր պատժատեսակ կամ պատասխանատվության այլ կարգ, հոդվածների որոշակի փոփոխությունները և ավելացված հանցակազմերը տեսականորեն հնարավորություն են տալիս առավել արդյունավետորեն կիրառելու քրեական օրենսգիրքը բազմաբնույթ հանցագործությունների դեպքում, որոնք կատարվել են ընտանիքի անդամի կողմից: Միևնույն ժամանակ, բռնության հիմնական տեսակների համար պատասխանատվություն նախատեսող հոդվածները լրացվել են ծանրացնող հանգամանքով, որը ենթադրում է առավել ծանր պատասխանատվություն *մերձավոր ազգականի կողմից կատարված հանցագործության* համար:

Այսպիսով՝ նոր քրեական օրենսգրքի 71-րդ հոդվածը, որը նախկին քրեական

օրենսգրքի 63-րդ հոդվածի լրացված տարբերակն է, այժմ արարքի համար նախատեսված պատասխանատվության և պատժի համար ծանրացնող հանգամանք է դիտարկում դրա՝ մերձավոր ազգականի նկատմամբ կատարված լինելը:

Ծանրացնող հանգամանքների շարքում հաջորդ լրացումը վերաբերում է *ատելության և թշնամանքի շարժառիթով* կատարված արարքներին: Մասնավորապես, նոր քրեական օրենսգրքի 71-րդ հոդվածով նախատեսված դրույթը ձևակերպված է հետևյալ կերպ. *«հանցանքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, սեռով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարելը…»*[86]*:* Չնայած նրան, որ այս ձևակերպումը ամբողջ ծավալով չի նախատեսում այն բոլոր հատկանիշները, որոնցով կարող են պայմանավորված լինել ատելությունն ու թշնամանքը, այնուամենայնիվ, ի տարբերություն նախկին օրենսգրքի, որը նախատեսում էր միայն ռասան, կրոնը և էթնիկ ծագումը որպես ատելության շարժառիթով կատարված հանցագործություններից պաշտպանված հատկանիշներ, այլ նախատեսում է ոչ սպառիչ ցանկ և կարող է մեկնաբանվել իրավունքի զարգացման պրակտիկային համապատասխան: Մասնավորապես, գենդերը և սեռը նույնպես անձի անձնական հատկանիշներ են, որոնք հաճախ կարող են ինքնին՝ առանց որևէ այլ պատճառի, լինել բռնարարի արարքի հիմքն ու շարժառիթը: Այսպիսի հանցագործությունների պարագայում հանցավորը թիրախավորում է տուժողին՝ պայմանավորված վերջինիս սեռի կամ գենդերային դերի շուրջ իր պատկերացումների անհամապատասխանությամբ և այդ հիմքով անհանդուրժողականությամբ ու ատելությամբ:

Գենդերով պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունները քրեորեն պատժելի արարքներ են՝ անձի գենդերի նկատմամբ կողմնակալության շարժառիթով: Այսպիսի հանցագործությունները կարող են ուղղված լինել մարդու, մարդկանց խմբի կամ գույքի դեմ[87]:

Գենդերով պայմանավորված ատելության հիմքով հանցագործություն կարող է համարվել նաև տուժողին առավել խոցելի և անպաշտպան ընկալելը և քրեորեն պատժելի արարքով իր առավելությունը ցույց տալը, տուժողի խոցելի վիճակն օգտագործելը՝ հույս ունենալով արդարացվելու կամ անպատիժ մնալու: Արդարացման պատկերացումը կարող է բխել անհանդուրժողականության և ատելության մթնոլորտից, որտեղ հանցավորն իրեն զգում է մեծամասնության դիրքորոշումը կրող և, այդ մեծամասնության պատկերացումներով պայմանավորված, իր անհանդուրժողականությունը կանանց նկատմամբ արտահայտող:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ քրեական վարույթների նախաձեռնումից հետո արարքի որակման համար էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք օրենսգրքի հատուկ մասում նախատեսված հանցակազմերը ևս պարունակում են նշյալ

[86] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docid=194397
[87] Տե՛ս ԵԱՀԿ ԺՀՄԻԳ գենդերով պայմանավորված ատելության հիմքով հանցագործություններ. https://www.osce.org/files/f/documents/f/1/480847.pdf

կետը որպես ծանրացնող հանգամանք: Հետևաբար, ստորև քննարկվող հոդվածները վերլուծելիս կանդրադառնանք նաև դրանց ծանրացնող հանգամանքներին:

Մինչ այդ անդրադառնանք այն հարցին, թե ինչ է նկատի ունեցել օրենսդիրը՝ ձևակերպելով ***«մերձավոր ազգական» հասկացությունը,*** և արդյոք տվյալ շրջանակը կարող է համարվել ընտանեկան բռնության բոլոր տեսակների համար արդյունավետ պաշտպանություն նախատեսող և բավարար կերպով կիրառելի եզրույթ: Այսպես՝ քրեական նոր օրենսգրքի շրջանակում ***«մերձավոր ազգական» հասկացությունը սահմանվել է հետևյալ կերպ.***

***«անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը, նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (այդ թվում՝ որդեգրված, խորթ, հոգեզավակ), եղբայրը, քույրը (այդ թվում՝ խորթ), պապը, տատը, թոռը, որդեգրող ծնողի կամ խնամատար ծնողի ամուսինը կամ նախկին ամուսինը, ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողը, ինչպես նաև ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողի համար՝ փեսան կամ հարսը: Ամուսին կամ նախկին ամուսին է համարվում նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող կամ գտնված անձը»:***

Այս հասկացության կիրառման շրջանակը վերլուծելիս հարկ է անդրադառնալ, իհարկե, այն հարցին, որ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 2024 թվականին ընդունված փոփոխությունների համաձայն՝ ընտանիքում բռնություն է համարվում ոչ միայն մերձավոր ազգականների՝ ներառյալ ամուսինների, այլ նաև զուգընկերոջ կողմից բռնությունը[88], որտեղ **«զուգընկեր» հասկացությունը** սահմանվում է հետևյալ կերպ.

***«զուգընկեր՝ անձ, որի հետ առկա են հարաբերություններ, որոնց հատուկ է սիրային կապը՝ անկախ համատեղ բնակության կամ միմյանց հետ սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքից»[89]:***

Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ չնայած նրան, **որ ընտանեկան բռնության դեմ օրենսգիրքը ընտանեկան բռնություն է ճանաչում զուգընկերոջ կատարած բռնությունը, որը կարող է լինել ոչ միայն գրանցված կամ քաղաքացիական ամուսնության մեջ գտնվող, այլ նաև պարզապես զուգընկերային հարաբերության մեջ գտնվող, բայց համատեղ կենցաղ չկիսող և սեռական հարաբերությունների մեջ չգտնվող անձը, ինչպես նաև նույնասեռական հարաբերությունների մեջ գտնվող անձը, քրեական օրենսգիրքը արարքի համար ծանրացնող հանգամանք նախատեսում  է ընտանեկան բռնության սուբյեկտների սահմանափակ շրջանակի համար:**

Այնուամենայնիվ, հատկանշական է, որ օրենսդրի ուշադրությունից չի վրիպել

[88] Տե՛ս ««Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, հոդված 5.http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=14678&Reading=0

[89] Տե՛ս ««Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, հոդված 6. http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=14678&Reading=0

բռնության՝ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից կատարված լինելու հարցը: Այն, որպես արարքի համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք, օրենսդիրը նախատեսել է սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների պարագայում:

Սույն հետազոտությունը ցույց է տալիս, որ գործնականում ևս, երբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնությունը կիրառվել է անձի նախկին զուգընկերոջ կողմից, որի հետ նա որևէ տեսակի ամուսնական հարաբերության մեջ չի եղել, այն որակվել է որպես «հասարակ հանցակազմ», իսկ նույն արարքի՝ նախկին ամուսնու կողմից կատարված լինելը ենթադրել է որակյալ հանցակազմ և որակվել որպես «ծանրացնող հանգամանքներում կատարված արարք»:

Առավել մտահոգիչ է այն, որ փաստացի օրենսգրքի՝ արարքի համար պատասխանատվությունը ծանրացնող այս հանգամանքը չի կարող կիրառվել նույնասեռական զույգերի նկատմամբ, հետևաբար նույնասեռ հարաբերությունների մեջ գտնվող անձը ունենում է նվազ պաշտպանություն տարբեր տեսակի ընտանեկան բռնություններից:

Այսպիսով՝ ***անհրաժեշտ է քրեական օրենսգրքում կատարել փոփոխություն և ծանրացնող հանգամանքների շարքում ավելացնել արարքի՝ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից կատարված լինելը նաև այլ տեսակի բռնությունների պարագայում՝ հասնելու համար, ընտանեկան բռնության համար առանձին դրույթներ նախատեսված չլինելու պայմաններում, հավասար և լիարժեք պաշտպանության հնարավորության ընտանեկան բռնությունից տուժած բոլոր անձանց համար:***

Իսկ որո՞նք են օրենսգրքի հատուկ մասում նախատեսված քրեորեն պատժելի արարքները, որոնց համար նախատեսված է մերձավոր ազգականի կողմից կատարված լինելը որպես ծանրացնող հանգամանք:

***<u>Հոդված 155. Սպանությունը</u>***

*1. Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը, պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:*

*Նույն արարքը, որը կատարվել է ատելության շարժառիթով կամ մերձավոր ազգականի կողմից, կարող է հանգեցնել ազատազրկման՝ տասնչորսից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկման:*

***<u>Հոդված 162. Ինքնասպանության հասցնելը</u>***

*1. Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ արժանապատվությունը նվաստացնելու եղանակով անձին անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:*

*Նույն արարքը, որը կատարվել է մերձավոր ազգականի կողմից, պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:*

***<u>Հոդված 166. Առողջությանը ծանր վնաս պատճառելը</u>***

*1. Մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելը, որը՝ 1) վտանգավոր է կյանքի համար, 2) առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ դրա գործառույթի կորուստ, 3) արտահայտվել է դեմքի, գլխի, ականջի կամ կզակի անջնջելի այլանդակմամբ, 4) առաջացրել է առողջության քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով, կամ 5) առաջացրել է հոգեկան խանգարում, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:*

Այս հոդվածում կատարվել են *որոշակի լրացումներ, մասնավորապես, 3-րդ կետում «դեմքի» բառից հետո ավելացվել են «գլխի, ականջի կամ կզակի» բառերը, ինչը թույլ է տալիս ընդլայնել գլխի տարբեր հատվածներին հասցված վնասի մեկնաբանման շրջանակը:* Բացի այդ՝ փոփոխվել է 4-րդ կետում տրված ձևակերպումը, որը նախկին օրենսգրքում նախատեսված էր հետևյալ կերպ. «...հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով...»: Այսինքն՝ **այժմ գործող օրենսգրքով պարտադիր չէ, որ հանցավորի համար ակնհայտ լինի տուժողի մասնագիտական աշխատունակության լրիվ կորուստը:**

Հոդվածում կատարվել է նաև հետևյալ լրացումը՝ որպես 2-րդ մաս. «մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է հղիության ընդհատում, պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով»:

1-ին մասում նախատեսված արարքը, որը կատարվել է ատելության շարժառիթով կամ մերձավոր ազգականի կողմից, կարող է հանգեցնել հինգից տասը տարի ժամկետով ազատազրկման:

***<u>Հոդված 167. Առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը</u>***

*Մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանը որևէ այլ վնաս պատճառելը, որը վտանգավոր չէ կյանքի համար և չի առաջացրել սույն օրենսգրքի 166-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ, բայց առաջացրել է՝ 1) առողջության տևական քայքայում կամ 2) ընդհանուր աշխատունակության մեկ երրորդից պակաս զգալի կայուն կորուստ, պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:*

*Նույն արարքը, որը կատարվել է ատելության շարժառիթով կամ մերձավոր ազգականի կողմից, կարող է հանգեցնել երկուսից հինգ տարի ժամկետով ազատազրկման:*

Ի տարբերություն նախկին օրենսգրքի՝ **այս հանցակազմի հիպոթեզից դուրս է բերվել**

**դիտավորությունը՝ որպես պատասխանատվության պայման, հետևաբար այլևս էական չէ՝ հանցավորը գործել է դիտավորությամբ, թե անզգուշորեն:**

***<u>Հոդված 171. Առողջությանը թեթև վնաս պատճառելը</u>***

*1. Մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելը, որն առաջացրել է՝ 1) առողջության կարճատև քայքայում կամ 2) ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ, պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: Նույն արարքը, որը կատարվել է ատելության շարժառիթով կամ մերձավոր ազգականի կողմից, պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:*

Հարկ է նշել, որ **փոփոխվել է նաև տուգանքի հաշվարկման կարգը.** այսպես, եթե քրեական նախկին օրենսգրքով տուգանքների հաշվարկման հիմք էր ընդունվում 1000 ՀՀ դրամ դրույքաչափը, ապա քրեական նոր օրենսգրքով հիմք է ընդունվում տվյալ պահին գործող նվազագույն աշխատավարձը: Հետևաբար քրեական նոր օրենսգրքով նախատեսված տուգանքի չափերը բարձրացվել են:

***<u>Հոդված 192. Ազատությունից ապօրինի զրկելը</u>***

*1. Մարդուն ազատությունից ապօրինի զրկելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 188-րդ, 189-րդ, 191-րդ կամ 315-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները, պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:*

*Նույն արարքը, որը կատարվել է ատելության շարժառիթով կամ մերձավոր ազգականի կողմից, պատժվում է չորսից ութ տարի ժամկետով:*

***<u>Հոդված 194. Հոգեկան ներգործությունը</u>***

*1. Սպանության, առողջությանը վնաս պատճառելու, խոշտանգման, սեռական ազատության կամ անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանք կատարելու, առևանգելու, ազատությունից ապօրինի զրկելու կամ խոշոր կամ առանձնապես խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել, ինչպես նաև սոցիալական մեկուսացումը կամ պարբերաբար պատիվն*

*ու արժանապատվությունը նվաստացնելը, պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով: Նույն արարքը, որը կատարվել է ատելության շարժառիթով կամ մերձավոր ազգականի կողմից, պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:*

Նկատենք, որ այս հանցակազմով ընդլայնվել է իրական սպառնալիք պարունակող արարքների շրջանակը, որը կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության: Մասնավորապես, եթե նախկինում պատժելի էր կյանքի, առողջության կամ գույքի դեմ ուղղված սպառնալիքը, ապա այժմ պատասխանատվության կհանգեցնեն ֆիզիկական, սեռական, հոգեկան անձեռնմխելիության և գույքի դեմ ուղղված սպառնալիքները ևս:

Միևնույն ժամանակ, որպես հոգեկան ներգործություն է սահմանվել «սոցիալական մեկուսացումը կամ պարբերաբար պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը», ինչը ևս դրական փոփոխություն է: Միևնույն ժամանակ, այս հոդվածով նախատեսված պատժաչափը նախկին օրենսգրքով նախատեսված մասով մեղմացել է:

***Հոդված 195. Ֆիզիկական ներգործությունը***

*1. Հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելը, եթե չեն առաջացել սույն օրենսգրքի 171-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:*

**Այս հոդվածով նախատեսված արաքը ևս**, ի տարբերություն քրեական նախորդ օրենսգրքի, **նախատեսում է առավել ծանր պատիժ և առավել լայն պաշտպանություն**՝ պայմանավորված այն հանգամանքով, որ եթե նախկինում պատասխանատվություն էր նախատեսված «ծեծ»-ի համար, որը սահմանվում էր որպես երեք և ավելի հարված հասցնելը, ապա այժմ պատասխանատվություն կարող է առաջացնել ցանկացած քանակի հարված հասցնելը:

*Նույն արարքը, որը կատարվել է ատելության շարժառիթով կամ մերձավոր ազգականի կողմից, պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝առավելագույնը երկու ամիս ժամկետով:*

***Հոդված 198. Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները***

*1. Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները,*

*այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են հանցագործությունից տուժած անձի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով՝ հանցագործությունից տուժած անձի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի անօգնական վիճակն օգտագործելով, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:*

*Նույն արարքը, որը կատարվել է ատելության շարժառիթով կամ մերձավոր ազգականի կամ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից, պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:*

***Յոդված 199. Սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը***

*1. Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով կամ առանց նրա համաձայնության ողջամիտ համոզմունքի կամ նույն եղանակներով նրան սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 188-րդ կամ 189-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները, պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:*

*Նույն արարքը, որը կատարվել է՝*

*1) հղի կնոջ նկատմամբ, 2) անչափահասի նկատմամբ, 3) մերձավոր ազգականի կամ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով, իսկ եթե կատարվել է 12-16 տարին չլրացած անձի նկատմամբ, պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:*

Չնայած նրան, որ տնտեսական բռնությունը քրեական օրենսդրությամբ արդյունավետ կերպով հասցեավորված չէ, և անգամ գործնականում համարվում է, որ այն չի հանդիպում որպես առանձին դրսևորում, այլ զուգորդում է ֆիզիկական, հոգեբանական կամ սեռական բռնությանը, որոշ արարքների համար նախատեսված է հենց տնտեսական բռնությունից առավել բարձր պաշտպանություն: Օրինակ՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու պարագայում ծանրացնող հանգամանք է համարվում այդ արարքը հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ կատարելը: Այսպես՝

***Յոդված 196. Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը***

*1. Անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, եթե*

*դա չի առաջացրել սույն օրենսգրքի 166-րդ կամ 167-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, և եթե բացակայում են սույն օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները, պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:*

*2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ ... 2) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ, ... 4) առանձին դաժանությամբ, ... 6) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:*

Որոշ հոդվածներում, որոնք կարող են կիրառելի լինել կանանց դեմ ուղղված հանցագործություններում՝ ներառյալ ընտանեկան բռնության դեպքերում, լրացումներ՝ կապված պաշտպանված հատկանիշի հետ, տեղի չեն ունեցել, սակայն ավելացվել են պատժաչափեր: Այսպես, օրինակ՝

***<u>Հոդված 163. Ինքնասպանության հակելը</u>***

*1. Հորդորելու, համոզելու կամ խաբեության միջոցով անձի մեջ ինքնասպանություն գործելու վճռականություն հարուցելը, եթե անձը ինքնասպանություն կամ ինքնասպանության փորձ է կատարել, պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:*

***<u>Հոդված 200. Սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ</u>***

*1. Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են 18 տարին լրացած անձի կողմից 16 տարին չլրացած անձի նկատմամբ, եթե բացակայում են սույն օրենսգրքի 189-րդ, 198-րդ կամ 199-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները, պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:*

***<u>Հոդված 207. Բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը</u>***

*1. Մարդու կամքին հակառակ կամ կամքն անտեսելով նրա բնակարան ապօրինի մուտք գործելը պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:*

*Հոդված 191. Մարդուն առևանգելը*

*1. Մարդուն առևանգելը՝ անձին իր կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով կամ անօգնական վիճակն օգտագործելով այլ վայր տեղափոխելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները, պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:*

Այս հանցակազմից դուրս են բերվել արարքի՝ խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով կատարված լինելու պայմանները, ինչը կարող է առավել արդյունավետ դարձնել դրա կիրառման շրջանակը և տուժող կողմին ազատել լրացուցիչ բեռից՝ հիմնավորելու խաբեության, սպառնալիքի կամ վստահությունը չարաշահելու հանգամանքը:

Ընտանեկան բռնության դեմ օրենսդրության արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևոր է նաև Օրենսգրքի 508-րդ հոդվածը, որը լրացուցիչ երաշխիք է ընտանեկան բռնության դեմ օրենքի դրույթների կատարման առումով: Մասնավորապես, այն պատասխանատվություն է նախատեսում «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը չկատարելու համար:

Սույն հետազոտության առարկա դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ գործնականում կա այս հոդվածի կիրառման փորձ, այնուամենայնիվ, հետազոտության մեթոդաբանությունն ու շրջանակը, ընդգրկելով բռնությունների վերաբերյալ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերը, թույլ չեն տալիս իրականացնել դատաքննության փուլ չհասած ընտանեկան բռնության դեպքերում նշված հոդվածի կիրառման արդյունավետությունը:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ քրեական նոր օրենսգիրքը կանանց նկատմամբ բռնությունից և հատկապես առավել տարածված՝ ընտանեկան բռնությունից պաշտպանության մեխանիզմների առումով գրանցել է առաջընթաց՝ նախատեսելով նախ և առաջ մերձավոր ազգականների կողմից ֆիզիկական, հոգեբանական ամբողջականության, անձնական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների, ինչպես նաև ներկա կամ նախկին զուգընկերոջ կողմից սեռական բռնության համար առավել խիստ պատասխանատվություն: Բացի այդ՝ որոշ հանցակազմերում ևս պատժաչափերը խստացվել են: Միևնույն ժամանակ, օրենսդրական կարգավորումները անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման են՝ ապահովելու համար կանանց պաշտպանությունը բռնությունից: Եթե պետությունը որդեգրել է քաղաքականություն՝ քրեական օրենսդրությամբ չառանձնացնելու ընտանեկան բռնության, ինչպես նաև գենդերային բռնության դեմ կարգավորումները և դրանք հասցեավորելու ընդհանուր կարգավորումներին

զուգընթաց ծանրացնող հանգամանքների միջոցով, ապա դրանց արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով պետք է նախատեսի նաև ռազմավարական փաստաթղթի և գործողությունների ծրագրի առկայությունը, որը ոչ միայն կծառայի գործադիր իշխանության մարմիններին որպես ոլորտում իրենց գործառույթներից բխող միջոցառումների ծրագիր, այլ նաև կուղղորդի իրավակիրառ մարմիններին օրենքի կարգավորումների մեկնաբանման և կիրառման ընթացքում որպես ուղեցույց և որպես օրենսդրական կարգավորումների նպատակային շղթայի մաս:

## 2.1. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2018 թվականին Հայաստանը ստորագրել է նաև *Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» կոնվենցիան*: Կոնվենցիան նույնպես ընդգծում է գենդերային բռնության դեմ համապարփակ, համալիր և համակարգված արձագանքման, լուծումների, կառուցակարգերի և քաղաքականության մշակման անհրաժեշտությունը:

Պարզելու համար, թե արդյոք Հայաստանն իրականացնում է գենդերային բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի՝ միջազգային չափանիշների վրա հիմնված գործողություններ, անհրաժեշտ է համեմատել պետության ազգային ռազմավարությունը վերոնշյալ կոնվենցիայի հիմնական սկզբունքների հետ և գնահատել դրանց համապատասխանությունը:

Այսպես՝ 2024-2028 թվականների ռազմավարության նախագիծը[90] սահմանում է գենդերային քաղաքականության վեց գերակայություն՝ կառավարման և որոշումների ընդունման մակարդակների, սոցիալ-տնտեսության և աշխատանքային, կրթության և գիտության, առողջապահության, գենդերային բռնության, կանանց/աղջիկների նկատմամբ և ընտանեկան բռնության կանխարգելման և կլիմայի ոլորտներում:

Ըստ նախագծի՝ գերակայություններն ուղղված են նշված ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների կիրարկման ու հնարավորությունների իրացման համար բարենպաստ և դրական միջավայրի ստեղծմանը՝ առաջնորդվելով նաև ՀՀ ստանձնած պարտավորություններով:

***Գերակայություն 1.*** *Կառավարման բոլոր ոլորտներում և որոշումների ընդունման մակարդակում գենդերային խտրականության հաղթահարում. կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի կատարելագործում, կանանց և տղամարդկանց հավասար ու լիարժեք մասնակցության հնարավորությունների ապահովում և ընդլայ-նում.* այս գերակայության շրջանակում նախանշված

[90] Տե՛ս ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարության նախագիծ. https://www.e-draft.am/ru/projects/6821/about

միջոցառումներն ուղղված են լինելու պետական քաղաքականության և կառավարման բոլոր ոլորտներում գենդերային հավասարության հասնելուն, մասնավորապես՝ մասնակցային, ներառական և հասանելի քաղաքական դաշտ ապահովելուն, որտեղ կանայք և տղամարդիկ, այդ թվում՝ տարբեր խոցելի խմբերի ներկայացուցիչները, կարող են ակտիվորեն և լիարժեք մասնակցել և հավասարապես նշանակալից ազդեցություն ունենալ կառավարման մակարդակում և որոշումների կայացման գործընթացներում:

Կոնվենցիայի համապատասխանաբար 4-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածները շեշտադրում են խտրականության արգելքը, գենդերային հավասարության համապարփակ քաղաքականությունները և անհրաժեշտ ֆինանսական ու մարդկային ռեսուրսների ապահովումը: Թեև ռազմավարության նախագծի և կոնվենցիայի նպատակները, ընդհանուր առմամբ, համահունչ են կանանց ներգրավվածության և գենդերային կարծրատիպերի հաղթահարման հարցերում, այնուամենայնիվ, ազգային ռազմավարության նախագիծն ուղղակիորեն չի անդրադառնում ֆինանսական և մարդկային ռեսուրսների հատկացմանը, ինչպես պահանջում է կոնվենցիան: Բացի այդ՝ բռնության դեմ պայքարի միջոցառումները և պետական բարեփոխումները ամբողջությամբ ներառված չեն ռազմավարության նախագծի մեջ:

***Գերակայություն 2.*** *Սոցիալ-տնտեսական բնագավառում՝ աշխատաշուկայում, տնտեսության տարբեր ճյուղերում, աշխատանքային գործունեության ձևերում, գենդերազգայուն մոտեցումների խրախուսում, աշխատուժի գենդերային խզվածքի նվազեցում և աշխատանքի պաշտպանության կառուցակարգերի բարելավում.* այս գերակայության շրջանակում նախանշված միջոցառումներն ուղղված են լինելու աշխատաշուկայի, զբաղվածության, տնտեսության ոլորտում գենդերազգայուն մոտեցումների խրախուսմանը, աշխատուժի սեռային խզվածքի նվազեցմանը, կանանց սոցիալ-տնտեսական ակտիվության խրախուսմանը և աշխատանքի պաշտպանության կառուցակարգերի բարելավմանը: Այստեղ կարևորվում է նաև կանանց և տղամարդկանց սոցիալ-տնտեսական կյանքում հավասար ներգրավվածության և առաջխաղացման խթանումը:

Կոնվենցիայի համապատասխանաբար 12-րդ, 14-րդ և 18-րդ հոդվածներն անդրադառնում են աշխատաշուկայում գենդերային կարծրատիպերի կանխարգելմանը և բռնության ենթարկված կանանց աջակցման ծառայություններին՝ ներառյալ տնտեսական աջակցության տրամադրմանը: Ե՛վ ռազմավարության նախագիծը, և՛ կոնվենցիան ընդգծում են գենդերային կարծրատիպերի դեմ պայքարը, ընդ որում՝ ռազմավարության նախագիծը շեշտադրում է կրճատել գենդերային խզվածքը աշխատանքի և տնտեսական մասնակցության մեջ: Սոցիալ-տնտեսական աջակցություն տրամադրելու նախաձեռնությունը համահունչ է կոնվենցիայի 18-րդ հոդվածին, որը վերաբերում է խոցելի խմբերի հատուկ կարիքներին համապատասխան տրամադրվող աջակցության ծառայություններին, բռնության ենթարկված անձանց տնտեսական հզորացմանը և

անկախացմանն ուղղված օգնությանը և այլն: Թեև ռազմավարության նախագիծը, ընդհանուր առմամբ, անդրադառնում է տնտեսական մասնակցությանը, սակայն այն ամբողջությամբ չի համապատասխանում կոնվենցիայի 12-րդ հոդվածին, որը տնտեսական կախվածությունը կապում է բռնության ռիսկի հետ: Ավելին՝ ռազմավարության նախագծի շրջանակը աշխատուժում գենդերային խզվածքի կրճատումը ուղղակիորեն չի կապում գենդերային բռնության կանխարգելման միջոցառումների հետ, ինչը կոնվենցիայի առանցքային կետերից է:

***Գերակայություն 3.*** *Կրթության և գիտության ոլորտում գենդերային խտրականության հաղթահարում, կանանց և տղամարդկանց լիարժեք մասնակցության խթանում, հավասար հնարավորությունների ընդլայնում և բարենպաստ միջավայրի ամրապնդում.* այս գերակայության շրջանակում նախանշված միջոցառումներն ուղղված են լինելու ոլորտում աղջիկների և տղաների, կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածությանն ու արդյունավետ մասնակցությանը հանուն անհատի ներուժի բացահայտման և զարգացման, ինչպես նաև հասարակության և պետության առաջխաղացման:

Կոնվենցիան, մասնավորապես՝ 14-րդ հոդվածը, նախանշում է կրթության միջոցով խթանել գենդերային հավասարությունը և վերացնել կարծրատիպերը, ինչպես նաև կրթական ծրագրերի միջոցով կանխարգելել կանանց նկատմամբ բռնությունը: Ե՛վ ռազմավարության նախագիծը, և՛ կոնվենցիայի 14-րդ հոդվածը ընդգծում են կրթության ոլորտում գենդերային հավասարության խթանման և կարծրատիպերի վերացման անհրաժեշտությունը: Ավելին՝ նախագիծն ուղղակիորեն անդրադառնում է կրթության մեջ գենդերային հավասարակշռության բացակայությանը և որոշակի կրթական ոլորտներում տղամարդկանց թերի ներկայացվածությանը, ինչը համահունչ է կոնվենցիայի սկզբունքներին՝ ուշադրություն դարձնելով ուսուցչական դերերում կարծրատիպերի դեմ պայքարին: Այնուամենայնիվ, թեև ռազմավարության նախագիծը կենտրոնանում է կրթության բոլոր մակարդակներում և գիտության մեջ գենդերային հավասար հնարավորությունների ընդլայնմանը, կրթական գենդերազգայուն միջավայրի բարելավմանը, այն ուղղակիորեն չի ներառում կրթության մեջ գենդերային բռնության վերաբերյալ հարցերը կամ կանանց նկատմամբ բռնության մասին իրազեկվածության բարձրացման հատուկ դրույթները, ինչպես և պահանջվում է 14-րդ հոդվածով: Կոնվենցիան նաև պահանջում է ավելի շատ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման հիմնախնդիրների վերաբերյալ կրթության հասցեական մոտեցում, որն ամբողջությամբ արտացոլված չէ ռազմավարության նախագծում:

***Գերակայություն 4.*** *Առողջապահության ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովում.* սույն գերակայության շրջանակում նախանշված միջոցառումներն ուղղված են լինելու մեծացնել կանանց հասանելիությունը հիմնական առողջապահական և վերարտադրողական առողջապահական ծառայություններին, հատկապես խոցելի խմբերի, գյուղական բնակավայրերի կանանց, հաշմանդամություն

ունեցող կանանց և էթնիկ փոքրամասնությունների խմբերի կանանց համար, այդ թվում՝ պետական բյուջեից տրամադրվող հատկացումները ավելացնելու և առողջության պարտադիր ապահովագրության համակարգում ներառելու ճանապարհով:

Ե՛վ ռազմավարության նախագիծը, և՛ կոնվենցիան ընդգծում են վերարտադրողական առողջության պահպանման կարևորությունը: Ռազմավարության նախագիծը հատուկ նախատեսում է խոցելի խմբերի համար առողջապահական ծառայությունների հասանելիության բարելավում (թեև նախանշվածներում էլ չի անդրադառնում ԼԲՏ+ կանանց) և վերարտադրողական ծառայությունների ընդլայնում, ինչը համահունչ է կոնվենցիայի 20-րդ հոդվածի նպատակներին: Այնուամենայնիվ, կոնվենցիան ավելի հեռահար շեշտադրումներ է կատարում՝ ընդգծելով բռնության՝ ներառյալ սեռական բռնության զոհերին մասնագիտացված աջակցության ծառայություններ մատուցելու կարևորությունը, և տուժածների աջակցության շրջանակում առողջապահական խնամքի ամբողջական մոտեցման ապահովումը: Այսինքն՝ ռազմավարության նախագիծն ավելի շատ կենտրոնանում է հավասարության ապահովման և առողջապահության հասանելիության վրա, սակայն ուշադրություն չի դարձնում գենդերային բռնության զոհերի առողջության պահպանմանն ուղղված և սոցիալական ծառայություններին, ինչպես նախատեսված է կոնվենցիայով: Ընդ որում՝ կոնվենցիայով սահմանվում է, որ ծառայությունները պետք է ունենան համապատասխան ռեսուրսներ, իսկ մասնագետները պատրաստված լինեն՝ տուժածներին օգնելու և նրանց համապատասխան ծառայություններին ուղղորդելու համար:

***Գերակայություն 6.*** *Կլիմայի փոփոխության նկատմամբ գենդերազգայուն և գենդերարձագանքող մոտեցումների ձևավորում, ներառական սկզբունքների ապահովում և իրազեկվածության բարձրացում.* այս գերակայության շրջանակում միջոցառումներն ուղղված են լինելու կլիմայի փոփոխության հետևանքով գենդերային և սոցիալական ազդեցության հիմնախնդիրների վերհանմանը և գենդերարձագանքող մոտեցումների ներդրմանը:

Թեև կոնվենցիան ուղղակիորեն չի անդրադառնում կլիմայի փոփոխությանն առնչվող հարցերին, սակայն ընդգծում է խտրականության բացակայությունը և գենդերազգայուն մոտեցումները, որոնք կիրառելի են տարբեր ոլորտներում, այդ թվում՝ բնապահպանական քաղաքականության մեջ: Ռազմավարության նախագիծը նախանշում է գենդերազգայուն մոտեցումներ և հավասար մասնակցություն, սակայն չի կապում կլիմայական խոցելիությունը գենդերային հիմքով բռնության ռիսկերի հետ, ինչը կարող է կարևոր կապ դառնալ ոլորտների միջև: Կլիմայի փոփոխության համատեքստում նախագիծը նպատակ ունի բարձրացնելու հանրության իրազեկվածությունը գենդերային հատուկ ազդեցությունների վերաբերյալ, ինչը համահունչ է կոնվենցիայի 13-րդ հոդվածին, որը կոչ է անում բարձրացնել գենդերային խնդիրների վերաբերյալ իրազեկվածությունը: Որոշումների կայացման գործընթացներում կանանց մասնակցության մեծացման և կլիմային առնչվող որոշումներում նրանց ընդգրկման

ապահովման վրա կենտրոնանալը արտացոլում է կոնվենցիայի ավելի լայն նպատակները՝ խթանելու գենդերային հավասարությունը և կանխելու գենդերային խտրականությունը: Այսպիսով, իհարկե, նախագիծն անդրադառնում է գենդերային մասնակցությանը կլիմայի փոփոխության քաղաքականության մշակման գործընթացում, սակայն ուղղակիորեն չի կենտրոնանում այս ոլորտում բռնության կանխարգելման վրա:

***Գերակայություն 5. Գենդերային բռնության և խտրականության հաղթահարում, կանանց և աղջիկների նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում, հաղթահարում և բռնության ենթարկված կանանց և աղջիկների պաշտպանություն և աջակցություն:***

Ռազմավարության նախագծով սահմանված նպատակներն ու նախանշված խնդիրների լուծումը, ընդհանուր առմամբ, ընտանեկան բռնության և գենդերային բռնության դեմ պայքարի առումով համահունչ է կոնվենցիայի սկզբունքներին (20-րդ, 22-րդ, 23-րդ հոդվածներ), մասնավորապես՝ ուշադրություն դարձնելով ապաստարանների, թեժ գծերի և օրենսդրական դաշտի բարելավմանը: Այս առումով ևս արձանագրված է նախագծում, որի հիմնական խնդիրներն են հասանելի, մատչելի աջակցության կենտրոնների և ապաստարանների քանակը, միասնական թեժ գծի բացակայությունը, ապաստարաններում տեղավորված երեխաների համար կրթության ապահովումը և այլն: Այնուամենայնիվ, կոնվենցիայով ավելի հստակ են սահմանվում թեժ գծերի կիրարկման վերաբերյալ պահանջները, մասնավորապես՝ կոչ է արվում, որ ձեռնարկվեն անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ պետական մակարդակով շուրջօրյա (24 ժամ/7 օր ռեժիմով) անվճար հեռախոսային օգնության գծեր ստեղծելու համար, որտեղ զանգահարողներին խորհրդատվություն կտրամադրվի գաղտնի կերպով կամ հաշվի առնելով նրանց անանունությունը բռնության բոլոր ձևերի վերաբերյալ (հոդված 24): Բացի այդ՝ կոնվենցիան ավելի հստակ է ամրագրում բռնության զոհերին տրամադրվող համապարփակ աջակցության մասին, այդ թվում՝ մատնանշելով, կարիքի դեպքում, իրավաբանական և հոգեբանական խորհրդատվությունը, ֆինանսական օժանդակությունը, կացարանով և կրթությամբ ապահովումը, աշխատանք գտնելու հարցում աջակցությունը:

Երկու փաստաթղթերն էլ առաջնահերթություն են տալիս բռնության զոհերի պաշտպանությանը և ընդունում են զոհերի համար մասնագիտացված ծառայությունների անհրաժեշտությունը: Նախագծով ազգային ռազմավարությունն ընդունում է ապաստարանների և օժանդակ ծառայությունների անհրաժեշտությունը, սակայն ընդգծում է հասանելիության բացերը, հատկապես գյուղական վայրերում: Իսկ կոնվենցիան պահանջում է, որ պետությունները համապատասխան ապաստարաններ և մասնագիտացված ծառայություններ տրամադրեն բռնության, այդ թվում՝ սեռական բռնության զոհերի համար: Այնուամենայնիվ, նախագծով բավարար մանրամասներ չեն ներկայացվում սեռական բռնության ենթարկված անձանց համար մասնագիտացված ճգնաժամային կենտրոնների ստեղծման կամ փոխհատուցման մեխանիզմների (հոդված 30) վերաբերյալ, ինչպես և պահանջվում է կոնվենցիայով: Ավելին՝ կոնվենցիայով հստակ սահմանվում է սեռական բռնության ենթարկված անձանց համար բժշկական

և դատաբժշկական փորձաքննություն, տուժածներին տրավմայի հաղթահարման աջակցություն և խորհրդատվություն ապահովելու անհրաժեշտության մասին (հոդված 25)։

Նախագիծն անդրադառնում է նաև պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների հարցերին, մասնավորապես՝ նախանշելով, որ անհրաժեշտ է բարելավել կանխարգելման ծրագրերը և հաղթահարել խտրական նախապատվությունը։ Այնինչ կոնվենցիայով ամրագրված է, որ պետությունները պետք է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ ձեռնարկեն, որպեսզի ապահովվի այնպիսի դիտավորյալ գործողությունների քրեականացումը, ինչպիսին է՝ աբորտ կատարելը առանց կնոջ նախնական և տեղեկացված համաձայնության  կամ վիրահատություն կատարելը, որի նպատակը կամ արդյունքն է՝ դադարեցնել կնոջ բնական վերարտադրողական կարողությունը առանց նրա նախնական և տեղեկացված համաձայնության կամ ընթացակարգի ըմբռնման (հոդված 39)։ Բացի այդ՝ նախագծով մատնանշվում է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների ռիսկերի և բացասական հետևանքների մասին, որի առնչությամբ նախատեսվում է տեղեկություն տարածել հանրային արշավների միջոցով։ Սա համահունչ է կոնվենցիայի սկզբունքներին՝ խթանելու հասարակությունում վնասակար գենդերային նորմերի փոփոխությունը։ Սակայն նախագծով հստակորեն չի ուրվագծվում, թե ինչպես կօգտագործվի զանգվածային լրատվության միջոցների և մասնավոր հատվածի ներգրավվածությունը սեռով պայմանավորված աբորտների դեմ պայքարում, ինչպես պահանջվում է կոնվենցիայի 17-րդ հոդվածով։

Պետք է նշել նաև, որ կոնվենցիայով ամրագրվում է կանանց սեռական օրգանների դիտավորյալ խեղման դեպքում համապատասխան օրենսդրական քայլեր ձեռնարկելը, այն է՝ նման արարքի քրեականացումը, ինչի մասին նախագծով անդրադարձ չի կատարվում (հոդված 38)։

Ստորև նաև ավելի մանրամասն կգնահատվեն նախագծով նախատեսված գործողությունները, որոնք ուղղված են կանանց և աղջիկների նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելմանն ու նվազեցմանը։ Այս գործողությունների արդյունավետությունը կարելի է դիտարկել մի քանի մակարդակով՝ *իրավական, ինստիտուցիոնալ, հասարակական և կրթական:*

- ***Իրավական համակարգի բարելավում***

Օրենքներում և իրավական ակտերում նախատեսված փոփոխությունները և լրացումները, հատկապես սոցիալապես անապահով և մարգինալացված կանանց պաշտպանության համար, կարևոր քայլեր են։ Այս նախաձեռնություններն ուղղված են նաև ընտանեկան բռնության դեպքերի հաշվառմանը և վերահսկմանը, ինչը կարող է խթանել արդարադատության համակարգի արդյունավետությունը։ Այս փոփոխությունները կարող են լինել արդյունավետ, եթե կիրառվեն հետևողականորեն՝ ապահովելով տուժողների (բռնության զոհերի) իրավական պաշտպանությունը և կանխարգելման մեխանիզմների ուժեղացումը։

- ***Տուժողների պաշտպանության իրավական մեխանիզմների բարելավում***

Զոհերի պաշտպանության մեխանիզմների բարելավումը ևս կարող է կարևոր դեր խաղալ բռնության նվազեցման գործում: Մասնավորապես, բռնության զոհերի համար ապահովված պաշտպանությունը, հուսալի և մատչելի իրավական աջակցությունը կարող են նվազեցնել բռնության կրկնման հավանականությունը: Օրինակ՝ զոհերի անվտանգության ապահովման համար էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառումը և աջակցման ծրագրերի իրականացումը կարող են նպաստել զոհերի պաշտպանությանը:

- ***Ինստիտուցիոնալ և հանրային ներգրավվածություն***

Ինստիտուցիոնալ կառույցների՝ ներառյալ ոստիկանության, դատախազության և այլ շահագրգիռ մարմինների համատեղ աշխատանքի բարելավումը, այդ թվում՝ օպերատիվ արձագանքման թիմերի ստեղծումը, կարող է բարձրացնել դեպքերի արձագանքման արդյունավետությունը: Հասարակական կազմակերպությունների ներգրավումը ևս կարևոր է, քանի որ դրանք կարող են լրացուցիչ ռեսուրսներ և աջակցություն տրամադրել:

- ***Կրթություն և հանրային իրազեկում***

Կրթական համակարգում և վերապատրաստման ծրագրերում ընտանեկան և գենդերային բռնության հարցերի ընդգրկումը կարևոր նշանակություն ունի հանրային ընկալումների ձևավորման գործում: Ուսուցիչների, առողջապահական համակարգի աշխատակիցների, դատավորների և իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստումը կարող է նպաստել հասարակության մեջ ընտանեկան բռնության խնդրի նկատմամբ ավելի զգայուն վերաբերմունքի ձևավորմանը: Սա կնպաստի բռնության դեպքերի վաղ հայտնաբերմանը և կանխարգելմանը:

- ***Միջազգային չափորոշիչների կիրառություն***

Ըստ Եվրոպայի խորհրդի պայմանագրերի շարք՝ թիվ 210 բացատրական զեկույցի՝ կոնվենցիայի վավերացումը և դրա կիրառումը ՀՀ օրենսդրության մեջ կամրապնդի կանանց և աղջիկների պաշտպանությունը միջազգային չափորոշիչներին համապատասխան: Սա կարագացնի մշտադիտարկման և հաշվետվողականության գործընթացները, ինչը հնարավորություն կտա ավելի խստորեն վերահսկելու բռնության դեպքերը:

- ***Մեդիայի ներգրավվածություն***

Զանգվածային լրատվության միջոցների (մեդիայի) ներկայացուցիչների շրջանում ընտանեկան և գենդերային բռնության վերաբերյալ քննարկումների և վերապատրաստումների իրականացումը կարող է կարևոր նշանակություն ունենալ հանրային ճիշտ կարծիքի ձևավորման գործում: Մեդիայի միջոցով հնարավոր է խթանել գենդերային հավասարության, բռնության դեմ պայքարի վերաբերյալ հանրային իրազեկվածությունը և փոխել կարծրատիպային պատկերացումները կանանց նկատմամբ:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված բոլոր գործողությունները կարող են ունենալ զգալի ազդեցություն կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և նվազեցման գործում, եթե դրանք իրականացվեն

համապարփակ և համադրված ձևով: Յուրաքանչյուր քայլ ունի իր յուրահատուկ դերը ընդհանուր ռազմավարության մեջ, և հաջողությունը կախված է ինչպես իրավական բարեփոխումներից, այնպես էլ պրակտիկայում՝ հանրային իրազեկման և կրթության ոլորտներում իրականացվող փոփոխություններից:

Գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված գործողություններ են ներառված նաև այլ գերակայություններում: Այս միջոցառումները կարևոր քայլեր են կանանց և աղջիկների նկատմամբ բռնության կանխարգելման, հաղթահարման և դրանցից տուժած անձանց պաշտպանության համար.

1. **Օրենսդրական բարեփոխումներ և միջազգային չափորոշիչների ընդունում**. ՀՀ օրենսդրության և միջազգային չափորոշիչների ներդրումը մեծացնում է իրավական պաշտպանությունը և կանխարգելման մեխանիզմների արդյունավետությունը: Մասնավորապես, սեռական ոտնձգությունների դեմ պայքարի մասին ենթաօրենսդրական ակտի մշակումը, ինչպես նաև ԵԽ կոնվենցիայի վավերացումը կարող են ամրապնդել իրավական հիմքերը՝ կանանց պաշտպանելու համար:
2. **Էլեկտրոնային հաշվառման համակարգերի ներդրում**. ընտանիքում բռնության դեպքերի էլեկտրոնային հաշվառման կենտրոնացված համակարգը կարևոր գործիք է, որը թույլ կտա ավելի արագ արձագանքել դեպքերին՝ ապահովելով անձնական տվյալների պաշտպանությունը: Սա նաև մշտադիտարկման և կանխարգելման համակարգերի ավելի լավ կառավարման հնարավորություն կտա:
3. **Բռնության ենթարկված անձանց պաշտպանության և աջակցության բարելավում**. զոհերի պաշտպանության մեխանիզմների բարելավումը, մասնավորապես՝ սոցիալապես անապահով և խոցելի խմբերի համար, ինչպիսիք են՝ հաշմանդամություն ունեցող կանայք, ՄԻԱՎ-ով ապրող կանայք, ԼԲՏ+ կանայք, կարող է բարձրացնել աջակցության հասանելիությունը և արդյունավետությունը: Սա կարևոր քայլ է, քանի որ շատ հաճախ այս խմբերն առավել խոցելի են և կարիք ունեն հատուկ պաշտպանության:
4. **Հասարակական իրազեկում և կրթություն**. հանրակրթական ծրագրերում գենդերային հարցերի վերաբերյալ թեմաների ներառումը, ինչպես նաև բուհերում գենդերային բռնության կանխարգելման ընթացակարգերի բարելավումը կարևոր են երիտասարդների իրազեկվածության բարձրացման համար: Այս կրթական միջոցառումները կարող են նպաստել կանխարգելման և հասարակության մեջ գենդերային զգայունության զարգացմանը:
5. **Վերապատրաստումներ և կարողությունների զարգացում**. իրավապահ, սոցիալական, առողջապահության ոլորտների աշխատակիցների և մեդիա ներկայացուցիչների վերապատրաստումները կարող են էականորեն բարձրացնել նրանց գենդերազգայունությունը և զարգացնել զոհակենտրոն մոտեցումները: Այսպիսի կարողությունների զարգացումը կարևոր է, քանի որ ապահովում է բարձրակարգ ծառայություններ և արդյունավետ արձագանքում բռնության դեպքերին:
6. **Վերականգնողական ծրագրեր**. բռնություն գործադրած անձանց համար վերականգնողական ծրագրերի ներդրումը՝ վերասոցիալականացման նպատակով,

կարևորվում է կանխարգելման տեսանկյունից: Դա կարող է նվազեցնել կրկնվող բռնությունների հնարավորությունը:

7. **Առողջապահական համակարգի ներգրավում.** առողջապահական հաստատություններում գենդերազգայունության բարձրացմանն ուղղված պարտադիր վերապատրաստումները և սեռական բռնության ենթարկված կանանց համար կլինիկական արձագանքի չափանիշների մշակումը նպաստում են բժշկական ծառայությունների բարելավմանը, ինչը շատ կարևոր է բռնության զոհերի համար:

Ընդհանուր առմամբ, այս միջոցառումները ներառում են բազմամակարդակ մոտեցումներ իրավական, սոցիալական, կրթական և առողջապահական ոլորտներում: Դրանք կարող են զգալի ազդեցություն ունենալ կանանց և աղջիկների նկատմամբ բռնության նվազեցման և կանխարգելման վրա, հատկապես եթե իրականացվեն համապարփակ, համակարգված և արդյունավետ կերպով:

## 3. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության մեթոդաբանական հարցաշարի հիման վրա տեղեկատվություն ստանալու հարցումներ են ուղարկվել ՀՀ քննչական կոմիտե, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանություն, ՀՀ դատական դեպարտամենտ, ՀՀ դատախազություն և ոլորտային հասարակական կազմակերպություններին: Ինչին ի պատասխան՝ **ՀՀ քննչական կոմիտեն, ՀՀ դատական դեպարտամենտը, ՀՀ դատախազությունը հայտնել են, որ հարցման վերաբերյալ առանձին վիճակագրություն կամ հաշվառում չի իրականացվում** (կից տե՛ս Հավելված 1): Միայն ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչությունից է տրամադրվել տեղեկություն այն մասին, որ համաձայն ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում գրանցված կին տուժողների նկատմամբ արձանագրված հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների՝

**2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ գրանցվել է**

**1271 ԴԵՊՔ**

որից 43-ը՝ ընտանեկան բռնության վերաբերյալ

**2023 թվականի դրությամբ գրանցվել է**

**2844 ԴԵՊՔ**

որից 325-ը՝ ընտանեկան բռնության վերաբերյալ

Միաժամանակ հայտնվել է, որ ՀՀ ՆԳՆ ինֆորմացիոն կենտրոնում հանցագործությունների մասին հաղորդումների, ինչպես նաև **հանցագործություններից տուժած անձանց սեռական կողմնորոշման, հաշմանդամության կամ առողջության խնդիրների վերաբերյալ հաշվառում չի իրականացվում:** *Այսինքն՝ հաշմանդամություն ունեցող կանանց, ՄԻԱՎ-ով ապրող կանանց կամ լեսբի կանանց, այս առումով անհնար է դառնում պարզել վերջիններիս իրավունքների, մասնավորապես՝ արդարադատության մատչելիության իրավունքի վիճակը*:

Ուստի սույն հարցի մասով խնդրահարույց է պետական կառույցների կողմից որևէ վիճակագրություն չվարելը, համապատասխանաբար, նրանց առանձնահատուկ կարիքներին համահունչ անհրաժեշտ քայլեր չձեռնարկելը:

Մեկ այլ տեղեկատվություն ստանալու հարցմամբ, որն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե՝ հետևյալ բովանդակությամբ, թե կանանց նկատմամբ բռնության հետ կապված ինչ տվյալներ են հավաքվում, ինչ վիճակագրություն է վարվում, ինչպես նաև՝ եթե ընտանեկան բռնության վերաբերյալ է միայն վարվում, ապա արդյո՞ք առանձնացվում են կանանց և տղամարդկանց նկատմամբ դեպքերը, պատասխանել են, որ **կանանց նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեն վիճակագրություն չի վարում**: Իսկ ընտանեկան բռնության դեպքերով վարվում է վիճակագրություն, սակայն չեն առանձնացվում կանանց և տղամարդկանց նկատմամբ հանցագործությունները (կից տե՛ս Հավելված 1):

Հետևաբար, նման պայմաններում, երբ իրավակիրառ մարմինները տվյալների հավաքում և վիճակագրություն չեն վարում, հնարավոր չի լինում, առնվազն բռնությունների մասով, ունենալ ամբողջական պատկեր կանանց իրավիճակի և կարիքների վերաբերյալ:

Ինչ վերաբերում է ոլորտային հասարակական կազմակերպություններից տեղեկատվություն ստանալուն, ապա միայն ***«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից է տրամադրվել տեղեկություն, որն էլ, մասնավորապես, ըստ հետազոտության մեթոդաբանական հարցաշարի, հայտնել է միայն հետևյալը. 217 հաղորդում է ներկայացվել, որոնցից քրեական վարույթ է հարուցվել 119-ի դեպքում, քրեական գործերը կարճվել են 10-ի դեպքում, տուժողը հետ է վերցրել գործը 10-ի դեպքում, տուժողը հրաժարվել է բողոքելուց 12-ի դեպքում, իսկ 19-ի դեպքում կայացվել է պաշտպանական որոշում:***

Սակայն բովանդակային կամ նկարագրական տեղեկատվություն որևէ պետական կամ հասարակական կառույցից հնարավոր չի եղել ստանալ՝ այդպիսի վիճակագրություն չվարելու կամ մեխանիզմներ չունենալու կամ ընդհանրապես նման տեղեկություններ տրամադրելու ցանկություն չունենալու կամ այլ հավանական պատճառներով: Ընդ որում, ոլորտային հասարակական կազմակերպություններից տեղեկություն ստանալու ընթացքում նրանց իրազեկվել է գաղտնիության սկզբունքի պահպանման և անձնական տվյալների պաշտպանության մասին: Այնուամենայնիվ, դեպքերի նկարագրություն հնարավոր չի եղել ստանալ, ըստ որի՝ պարզապես անհնար է եղել պարզել յուրաքանչյուր բռնության դեպքով առանձնահատկությունները կամ մեթոդաբանական հարցաշարով նախատեսված հարցերի

լիարժեք պատասխանները:

Պետք է առանձնահատուկ նշել, որ քրեական նոր օրենսգրքի ընդունումից հետո՝ մինչև հետազոտության իրականացման պահը, ուսումնասիրության առարկա դատական գործերով վերջնական դատական ակտեր հազվադեպ են կայացվել, որի պատճառով գործերը վերլուծվել են դրանց ընթացիկ կայացած ակտերի հիման վրա:

Ավելին՝ www.datalex.am դատական ակտերի որոնման համակարգից հնարավոր է եղել պարզել միայն ֆիզիկական և հոգեբանական բռնության դեպքերը (ուշադրություն. դեպքերի հավաքումը կատարվել է մինչև 2024 թվականի հուլիսն ընկած ժամանակահատվածը), մասնավորապես.

**Ֆիզիկական ներգործության դեպքերից առկա է 191 գործ, որոնցից 142-ում տուժողը կին է**

**Հոգեկան ներգործության դեպքերից առկա է 25 գործ, որոնցից 21-ում է տուժողը կին** (կից տե՛ս Հավելված 2):

- ***Սակայն սեռական բռնության դեպքերով միայն 1 գործ է հասանելի, իսկ տնտեսական բռնության դեպքերով որևէ գործ հասանելի չի եղել:***

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, պատահականության սկզբունքով **www.datalex.am դատական ակտերի որոնման համակարգից հանվել են 22 դատական գործեր** (կից տե՛ս Հավելված 2), որից.

- ***10-ը միաժամանակ ֆիզիկական և հոգեբանական բռնությամբ դեպքեր են:*** Դրանցից 8-ի դեպքում հանցավոր արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ և 195-րդ հոդվածների հատկանիշներով (հոգեկան ներգործությունը և ֆիզիկական ներգործությունը): 10-ից 1-ի դեպքում հանցավոր արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ, 195-րդ և 196-րդ հոդվածներով նախատեսված հատկանիշներով (հոգեկան ներգործությունը, ֆիզիկական ներգործությունը և ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը): Իսկ մյուսի դեպքում հանցավոր արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ, 194-րդ և 195-րդ հոդվածներով (առողջությանը թեթև վնաս պատճառելը, հոգեկան ներգործությունը և ֆիզիկական ներգործությունը):
- ***5-ը միայն ֆիզիկական բռնության դեպքեր են***, այդ թվում՝ 4-ի դեպքում հանցավոր արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի հատկանիշներով (ֆիզիկական ներգործությունը), իսկ 1-ի դեպքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի հատկանիշներով (առողջությանը թեթև վնաս պատճառելը):

- ***6-ը միայն հոգեբանական բռնության դեպքեր են***, որտեղ հանցավոր արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի հատկանիշներով (հոգեկան ներգործությունը):
- **1-ը միայն սեռական բռնության դեպք է**, որտեղ հանցավոր արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված հատկանիշներով (սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելը):

Այսինքն, համադրելով միմյանց, **22 դատական գործերից 15-ում առկա են ֆիզիկական, 16-ում՝ հոգեբանական բռնության դեպքեր, իսկ 1-ում՝ սեռական բռնության դեպք:**

**Ուսումնասիրված 22 դատական գործերից միայն 9-ի դեպքում է կայացվել վերջնական դատական ակտ (դատավճիռ),** որից 8-ի դեպքում նշանակվել է միայն կամ ներառյալ ազատազրկման ձևով պատիժը, այդ թվում՝

## ԴԵՊՔԵՐ

| | |
|---|---|
| 1 | Նշանակվել է **տուգանք** 200,000 ՀՀ դրամի չափով |
| 1 | Նշանակվել է 1 ամիս 15 օր ժամկետով **ազատազրկում և տուգանք** 340,000 ՀՀ դրամի չափով |
| 2 | Նշանակվել է 1 ամիս ժամկետով **ազատազրկում** |
| 2 | Նշանակվել է 2 ամիս ժամկետով **ազատազրկում** |
| 1 | Նշանակվել է 6 ամիս ժամկետով **ազատազրկում** |
| 1 | Նշանակվել է 1 տարի 6 ամիս ժամկետով **ազատազրկում** |
| 1 | Նշանակվել է 3 տարի 3 ամիս ժամկետով **ազատազրկում** |

Ընդ որում՝ **վերջնական դատական ակտ (դատավճիռ) կայացած**.

► **Վերոգրյալ 9-ից 3-ի դեպքում ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չի կիրառվել,** որտեղ 2-ի դեպքում կիրառվել է տուգանքը, այդ թվում՝ դրանցից մեկի դեպքում ֆիզիկական և հոգեկան ներգործությունը հաշվի

չի առնվել՝ չնայած այն հանգամանքին, որ մեղադրական եզրակացության մեջ հաշվի առնված եղել են դրանք, սակայն դատարանը միայն հաշվի է առել կարևոր փաստաթղթեր հափշտակելու հանգամանքը, իսկ երրորդ դեպքով սահմանվել է երկու տարի փորձաշրջան և առանց համաձայնության երկրի տարածքը լքելու արգելքը:

► **Վերոգրյալ 9-ից 7-ի դեպքում հանցավոր արարքը կատարվել է որպես «մերձավոր ազգականի» կողմից կատարված, այսինքն՝ որպես ծանրացնող հանգամանք է հաշվի առնվել պատժաչափը որոշելիս**: Իսկ 2-ի դեպքում դատական ակտի բովանդակությունում ներկայացված է որպես «կնոջ» կամ «նախկին ընկերուհու» նկատմամբ կատարված արարք, ինչի դեպքում, սակայն, արարքը պետք է դիտարկել որպես գենդերային հիմքով բռնություն (մասնավորապես, վերջին դեպքով՝ բռնարարը, ակնհայտ իշխանություն դրսևորելով, պարբերաբար մտել է տուժողի՝ նախկին ընկերուհու բնակարան և նրա նկատմամբ հոգեկան ներգործություն կիրառելու դիտավորությամբ սպառնացել՝ սպանել, ինչպես նաև կատարել բռնի գործողություններ): Մյուս դատական գործերով որպես ծանրացնող հանգամանք են դիտարկվել, օրինակ, նաև մոր և քրոջ կամ նախկին կնոջ նկատմամբ կատարված բռնությունները:

► **Վերոգրյալ 9-ից 2-ի դեպքում են մեղմացնող հանգամանքներ հաշվի առնվել պատժաչափը որոշելիս,** մասնավորապես՝ 1-ի դեպքում այդպիսիք են համարվել իրեն մեղավոր ճանաչելը, կատարածի համար զղջալը և երեք անչափահաս երեխաներ ունենալը, իսկ մյուսի դեպքում՝ երեք անչափահաս երեխաներ ունենալը:

► **Տվյալ հոդվածով կամ հոդվածներով սահմանված պատժաչափերից, ըստ խստության, վերոգրյալ 9-ից 7-ի դեպքում ընտրվել է մեղմ պատժաչափ, իսկ 2-ի դեպքում՝ միջին պատժաչափ:**

► **Վերոգրյալ 9-ից 5-ի դեպքում ֆիզիկական և հոգեբանական բռնության զուգորդված դեպքեր են** (ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ և 194-րդ հոդվածներ), **2-ի դեպքում ֆիզիկական բռնության դեպքեր են** (ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդված), **2-ը հոգեբանական բռնության դեպքեր են** (ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդված) :

► **Վերոգրյալ 9-ից 8-ի դեպքում խափանման միջոցն ընտրվել է ազատազրկման հետ չկապված՝ բացակայելու արգելքը, իսկ 1-ով՝ կալանքը:**

► **Վերոգրյալ 9-ից 6-ի դեպքում քրեական վարույթի տևողությունը** (հետազոտության պահին) **մինչև 1 տարի է, 2-ի դեպքում՝ 1,5-ից մինչև 2 տարի, իսկ 1-ի դեպքում՝ 1-ից մինչև 1,5 տարի:**

► **Վերոգրյալ 9-ից 7-ի դեպքում հանցագործության որակումը եղել է միայն բռնության 1 դրվագի վերաբերյալ, իսկ 2-ի դեպքում ընտանեկան բռնության նախկին դրվագների առկայությունը, պարբերական բնույթը ազդեցություն ունեցել են հանցագործության որակման կամ պատժաչափի վրա:**

► **Բոլոր 22 դատական գործերից, այդ թվում՝ վերջնական դատական ակտ կայացրած 9 դատական գործերից միայն 1 դատական ակտի բովանդակությունում է նկատելի, որ անմիջականորեն կիրառվել են միջազգային իրավունքի համապատասխան նորմերը կամ չափանիշները՝ հիմնվելով Սահմանադրության 81-րդ հոդվածի վրա (օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը):**

► **Ուսումնասիրված բոլոր 22 դատական գործերը եղել են հանրային մեղադրանքի գործեր:**

► **Ուսումնասիրված 22 դատական գործերից որևիցե մեկում, այդ թվում՝ 9 դատական գործերով կայացրած վերջնական դատական ակտերում, խտրական դրսևորումները արտացոլված չեն եղել:**

► **22 դատական գործերի ուսումնասիրությամբ չի պարզվել, այդ թվում՝ 9 դատական գործերով կայացրած վերջնական դատական ակտերում արտացոլված չեն եղել, թե հարուցված քրեական գործերի հիման վրա տուժողը բռնության հետևանքով կրած ծախսերի (օրինակ՝ առողջապահական ծառայություններից օգտվելու մասով) փոխհատուցում ստացել է, թե ոչ:**

► 22 դատական գործերի ուսումնասիրությամբ նույնպես չի պարզվել , թե արդյոք դատարանը կայացրել է պաշտպանական որոշումներ, կամ ինչ ժամկետում է կայացվել, և եթե կայացվել է, ապա՝ քանի՞ օրով, կամ արդյոք երկարացվել է պաշտպանական որոշումը:

► **22 դատական գործերից 2-ի դեպքում հանցավոր արարքը որակվել է** նաև ՀՀ քրեական օրենսգրքի 508-րդ հոդվածով նախատեսված հատկանիշներով, այն է՝ **անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը չկատարելը:**

***Աղյուսակ 1-ում նկատելի է, որ քրեական վարույթներից կեսի*** (ուսումնասիրված 22 դատական գործերից 11-ի դեպքում) ***տևողությունը մինչև 1 տարի է, 6-ի դեպքում՝ 1-ից մինչև 1,5 տարի, իսկ մնացած 5-ի դեպքում՝ 1,5-ից 2 տարի:***

| *Քրեական վարույթի տևողությունը՝ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներով հարուցված գործերի* | ՀՀ ՔՕ h.195 | ՀՀ ՔՕ h.194, h.195 | ՀՀ ՔՕ h.194, h.195, h.196 | ՀՀ ՔՕ h.194 | ՀՀ ՔՕ h.198 | ՀՀ ՔՕ h.171 |
|---|---|---|---|---|---|---|
| *Մինչև 1 տարի* | 2 | 4 | | 3 | 1 | 1 |
| *1 - 1,5 տարի* | 2 | 2 | | 2 | | |
| *1,5 - 2 տարի* | | 3 | 1 | 1 | | |

Արձանագրված 1 սեռական բռնության դեպքով դատական գործով հանցավոր արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված

հատկանիշներով, այն է՝ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելը: Տվյալ գործով վերջնական դատական ակտ չի կայացվել, այսինքն՝ դատական գործը ընթացքի մեջ է: Այս դեպքով քրեական վարույթի տևողությունը դեռևս մինչև 1 տարի է: Ընդ որում՝ հանցագործության որակումը եղել է միայն բռնության 1 դրվագի վերաբերյալ: Հարկ է նշել, որ սույն դեպքը տնտեսական բռնության տարրեր է պարունակում. բռնարարը ոգելից խմիչք օգտագործելուց հետո մտել է վագոն-տնակում գտնվող ընկերոջ կնոջ սենյակ, հագուստները հանել, պառկել է վերջինիս անկողնում, ապա, ձեռքերով բռնելով ***նյութական վիճակի բարելավումն ու վատթարացումն ամբողջությամբ իրենից կախված, փաստացի իրենից նյութական կախվածության մեջ գտնվող տուժողի*** որովայնից, վերջինիս հետույքի հատվածով քաշել է դեպի իրեն, այնուհետև, տուժողի նկատմամբ բռնություն գործադրելով, նրա աջ ձեռքից բռնել, քաշել և գցել է անկողնուն, պառկել է նրա վրա, ապա նրա կամքին հակառակ համբուրել է շուրթերը, միաժամանակ հայտնել սեռական հարաբերություն ունենալու և սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելու իր ցանկության մասին՝ այդ կերպ հագուրդ տալով իր սեռական կրքին:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով վերլուծության ընթացքում ստացած տվյալները/տեղեկությունը՝ կարելի է անել մի քանի կարևոր եզրակացություններ.

- ***Վիճակագրական տվյալների պակասը.*** պետական կառույցները չեն վարում անհրաժեշտ վիճակագրություն կանանց նկատմամբ հանցագործությունների վերաբերյալ, ինչը մեծապես խոչընդոտում է խնդիրների մասին ամբողջական պատկերացում ստանալը: Մասնավորապես, չկան տվյալներ հաշմանդամություն ունեցող կանանց, ՄԻԱՎ-ով ապրող կանանց կամ լեսբի, բիսեքսուալ, տրանս կանանց վերաբերյալ:
- ***Իրավակիրառ մարմինների անարդյունավետ աշխատանքը.*** ՀՀ դատական դեպարտամենտը, քննչական կոմիտեն կամ դատախազությունը չեն վարում կանանց նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ պատշաճ վիճակագրություն, իսկ դրանց առկա վիճակագրությունն էլ չի տալիս անհրաժեշտ մանրամասներ:
- ***Հասարակական կազմակերպությունների դերը.*** կանանց նկատմամբ բռնությունների վերաբերյալ տեղեկություն հիմնականում հնարավոր է ստանալ ոլորտային հասարակական կազմակերպություններից, սակայն նրանց տրամադրած տվյալները սահմանափակ են և չեն ապահովում իրավիճակի լիարժեք տեսանելիություն:
- ***Դատական գործերի վերլուծության սահմանափակումներ.*** www.datalex.am համակարգից ստացված դատական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դատական գործընթացների մեծ մասը կապված է ֆիզիկական և հոգեբանական բռնության հետ, սակայն սեռական կամ տնտեսական բռնության դեպքեր ավելի հազվադեպ են արձանագրվել:

- ***Հանցագործությունների ոչ լիարժեք քննում.*** հաշվի չեն առնվում խտրական շարժառիթները, հանցանքի՝ տուժողի գենդերով կամ սեռով պայմանավորված լինելը: Տնտեսական բռնությունն ընդհանրապես հաշվի չի առնվում, և հանցանքը չի որակվում որպես տնտեսական, թեև փորձը ցույց է տալիս, որ սովորաբար տնտեսական բռնության դեպքերը հաճախ զուգորդվում են բռնության մյուս տեսակների հետ:

- ***Հանրային վերահսկողության անհնարինությունը սեռական բռնության դեպքերում.*** ֆիզիկական և հոգեբանական բռնության դեպքերում հնարավոր է դառնում որոշակի չափով հանրային վերահսկողություն իրականացնել, սակայն սեռական բռնության դեպքերում որևէ կերպ հնարավոր չի լինում տեղեկություններ ձեռք բերել դրանց քանակի և/կամ քննության ընթացքի վերաբերյալ: Չնայած այն հանգամանքին, որ սեռական բռնության դեպքերում անձնական տվյալների պաշտպանությունն օրենքով է նախատեսված, փաստացի տվյալների բացակայության պատճառով հնարավոր չի լինում ստանալ վիճակագրություն կամ անհրաժեշտ տեղեկություններ:

- ***Դատական գործերի քննության ոչ ողջամիտ ժամկետներ.*** դատական ակտերի մեծ մասը վերջնական որոշումներ չեն, ինչը ցույց է տալիս գործերի երկարատևությունը և դատական համակարգի ոչ արդյունավետությունը: Սա վկայում է, որ շատ դեպքեր դեռևս ընթացքի մեջ են, և տուժողները չեն ստանում իրենց պատշաճ պաշտպանությունը և, ինչու չէ, կրած վնասի փոխհատուցումը:

- Թեև ընտանեկան բռնության մասին օրենքի վերջին փոփոխություններով նախատեսված է ***«զուգընկեր»*** հասկացությունը, որն ավելի լայն է մեկնաբանվում, քան ***«մերձավոր ազգական»*** հասկացությունը, ՀՀ քրեական նոր օրենսգիրքը փաստացի մերձավոր ազգական չհամարվող անձի կողմից կատարվող հանցագործությունը չի դիտարկում որպես ծանրացնող հանգամանք՝ հանգեցնելով նման դեպքերում ավելի մեղմ պատասխանատվության:

- ***Միջազգային իրավունքի նորմերի քիչ կիրառում.*** ուսումնասիրված դատական ակտերից միայն մեկի դեպքում են կիրառվել միջազգային իրավունքի նորմերը, ինչը վկայում է, որ Հայաստանի դատական համակարգը հաճախ անտեսում է միջազգային չափորոշիչները: Կանանց նկատմամբ բռնությունների վերաբերյալ մարդու իրավունքների միջազգային մարմինների վերլուծություններն ու դիտարկումները հաշվի չեն առնվում, ինչը կարող է հանգեցնել մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների սահմանափակ մեկնաբանման ու կիրառման:

Հայաստանում կանանց նկատմամբ բռնության դեպքերի քննումը և դատական գործընթացներն ունեն լուրջ խնդիրներ, որոնք մեծապես կապված են տվյալների և վիճակագրության բացակայության, ինչպես նաև դատական համակարգի անարդյունավետության հետ: Այս հանգամանքները խոչընդոտում են կանանց իրավունքների պաշտպանությունը և նրանց արդարադատության մատչելիությունը:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ կարելի է առաջարկել հետևյալ բարեփոխումները՝ կանանց նկատմամբ բռնության դեպքերի ավելի արդյունավետ կանխարգելման և նրանց իրավունքների պաշտպանությունը բարելավելու համար.

1 ***Կանանց նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ տվյալների հավաքում և վիճակագրության վարում***

Ստեղծել միասնական տվյալների բազա, որտեղ կպահպանվեն բոլոր հանցագործությունների վերաբերյալ մանրամասն վիճակագրական տվյալները՝ ներառյալ սեռը, տուժող կանանց սեռական կողմնորոշումը, հաշմանդամության կարգավիճակը, առողջության խնդիրները և այլն:

Վարել պարտադիր վիճակագրություն բոլոր պետական կառույցներում (օրինակ՝ ոստիկանություն, քննչական կոմիտե, դատական դեպարտամենտ), ինչը կներառի նաև կանանց նկատմամբ բոլոր տեսակի բռնությունների վերաբերյալ տվյալների հավաքումը:

2 ***Իրավակիրառ մարմինների կարողությունների զարգացում***

Իրականացնել կրթական ծրագրեր իրավապահ մարմինների աշխատակիցների համար, որոնք ուղղված կլինեն կանանց նկատմամբ բռնության, հատկապես սեռական և տնտեսական բռնությունների վերաբերյալ տվյալների հավաքման և հետաքննության արդյունավետ մեթոդներին:

Իրականացնել հստակ ցուցումներ՝ խտրականության հիմքով հանցագործությունների, ինչպես նաև գենդերային հիմքով բռնության դեպքերի վերաբերյալ դատական գործընթացներում միջազգային իրավունքի նորմերի կիրառման համար:

3 ***Հասարակական կազմակերպությունների և պետական կառույցների համագործակցության բարելավում***

Ձևավորել համատեղ աշխատանքային խմբեր, որտեղ ներգրավված կլինեն հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները՝ պետական կառույցների հետ համագործակցելու և տվյալների փոխանակման մեխանիզմներ մշակելու համար:

Ապահովել տվյալների գաղտնիության պաշտպանություն՝ սահմանված միջազգային և պետական չափանիշներով, ինչը թույլ կտա հասարակական կազմակերպություններին տրամադրել ավելի մանրամասն և նկարագրական տեղեկություններ առանց գաղտնիության խախտման:

4 ***Դատական համակարգի բարեփոխում***

Դատական գործերի քննման ժամկետների կրճատում բռնության դեպքերին անդրադառնալիս՝ ապահովելով արագ և արդյունավետ դատական գործընթացներ:

Պաշտպանական որոշումների ավելի խիստ և հետևողական կիրառում՝ ներառյալ

տուժողների պաշտպանվածության երաշխիքների, ինչպես նաև տուժողի իրավունքների պաշտպանվածության վերաբերյալ հստակ մեխանիզմների կիրառում:

### 5 *Հանրային իրազեկման և կրթական քարոզարշավներ*

Քարոզարշավների իրականացում գենդերային բռնության դեմ՝ հասարակության իրազեկման, կանանց իրավունքների և նրանց պաշտպանության հնարավորությունների մասին տեղեկության տարածման նպատակով:

Կրթական ծրագրերի իրականացում դպրոցներում և բուհերում՝ գենդերային հավասարության, մարդու իրավունքների և բռնության կանխարգելման վերաբերյալ:

### 6 *Միջազգային չափանիշների և պրակտիկաների կիրառման խթանում*

Միջազգային կոնվենցիաների և պայմանագրերի ներդրում օրենքների և իրավակիրառ պրակտիկաների մեջ, ինչը կօգնի ապահովելու պետության կողմից միջազգային չափորոշիչներին համապատասխանեցված գործառույթները:

Միջազգային փորձի կիրառումը բռնության դեպքերի կառավարման և հետաքննության ընթացքում՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը:

Այս առաջարկությունները կօգնեն ապահովելու կանանց նկատմամբ բռնության դեպքերի ավելի արդյունավետ արձագանքումը, արդարադատության մատչելիությունը և կնպաստեն գենդերային հավասարության հաստատմանը Հայաստանում:

# ՀԱՎԵԼՎԱԾ 1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

0010, ք. Երևան, Վ. Սարգսյանի փ. 5

№ 20.5/20.5/4240-2024
«04» 03 2024 թ.

**Տաթևիկ Աղաբեկյանին**
(ք.Երևան, Հովսեփ Էմին 119/2, csvwarmenia@gmail.com)

Ի պատասխան ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված 2024 թվականի փետրվարի 29-ի թիվ 03 հարցման՝ հայտնում եմ, որ հայցվող տեղեկատվությունը չի կարող տրամադրվել, քանի որ ՀՀ դատախազությունում նշված հարցերի վերաբերյալ առանձին վիճակագրական հաշվառում առկա չէ:

**Հարգանքով՝**

**Կազմակերպական-վերահսկողական**
**և իրավական ապահովման**
**վարչության դատախազ՝** **Վ.Դաշտոյան**

# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ. (00374 10) 511-794, www.court.am

№ ԴԴՎ-1 Ը-1774

«11» մարտի 2024թ.

**ԸՆԴԴԵՄ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ**
**ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱ ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ**
**ՏԻԿԻՆ ՏԱԹԵՎԻԿ ԱՂԱԲԵԿՅԱՆԻՆ**

Ի պատասխան Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում 01.03.2024թ. մուտքագրված Ձեր 29.02.2024թ. թիվ 04 առցանց հարցման.

Տեղեկացնում եմ, որ Դատական դեպարտամենտի կողմից ՀՀ դատարանների գործունեության վերաբերյալ դատական վիճակագրությունը (ըստ դատարանների և ըստ դատավորների) վարվում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1542-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ ***կիսամյակային և տարեկան*** պարբերականությամբ, որը հրապարակվում է Դատական իշխանության պաշտոնական՝ «www.court.am» կայքէջում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Ձեր հարցման վերաբերյալ առանձին դատական վիճակագրություն կամ հաշվառում Դատական դեպարտամենտի կողմից չի վարվում:

**ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ**
**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ**
**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **ԱՐՄԻՆԵ ԱԼԻԽԱՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ**
**ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

---

ք.Երևան, Սամիկոնյանց 46/5

«04» 03 2024 թ. N 12/12/69015-2024

<< Ընդդեմ կանանց նկատմամբ
բռնության կոալիցիա>>
ՀԿ նախագահ
Տաթևիկ Աղաբեկյանին

ք. Երևան Հ. Էմին 119/2
հեռ. 094-422-922
էլ. փոստ csvwarmenia@gmail.com

*Հարգելի՛ փիկին Աղաբեկյան,*

*Ի պատասխան Ձեր 29.02.2024թ. թիվ 02 հարցման՝*

Հայտնում եմ, որ Ձեր կողմից առաջ քաշված հարցերի վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեում վիճակագրություն չի վարվում:

*Հարգանքով՝*

Պետ՝ Կ. Սահակյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ**
**ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

0025, ք. Երևան, Նալբանդյան 130 | գործավարություն, հեռ. +374(010) 59-64-36

№ 18/294 «07» 03 2024 թ.

Ձեր

**<<Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա>>**
**ՀԿ նախագահ**
**Տ.Աղաբեկյանին**
**/էլ. հասցե՝ csvwarmenia@gmail.com/**

***Հարգելի փիկին Աղաբեկյան,***

Ի պատասխան Ձեր հարցմանը հայտնում եմ, որ համաձայն ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում գրանցված կին տուժողների նկատմամբ գրանցված հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների՝ 2022թ. հուլիսի 1-ի դրությամբ գրանցվել է 1271 դեպք, որից՝ 43-ը ընտանեկան բռնության վերաբերյալ, իսկ 2023թ.՝ 2844 դեպք, որից՝ 325-ը ընտանեկան բռնության վերաբերյալ:

Միաժամանակ հայտնում եմ, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում հանցագործությունների մասին հաղորդումների, ինչպես նաև հանցագործություններից տուժած անձանց սեռական կողմնորոշման, հաշմանդամության կամ ունեցած այլ առողջական խնդիրների վերաբերյալ ինֆորմացիոն կենտրոնում հաշվառում չի իրականացվում:

***Հարգանքով՝***

**Պետի տեղակալ,**
**ոստիկանության գնդապետ** **Է.Պետրոսյան**

*կատ. Լ.Խաչատրյան*
*/հեռ. 596020/*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ**
**ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

ք.Երևան, Մամիկոնյանց 46/5

«13» 08 2024թ. N 12/12/246404-2024

Քաղ. Վ. Տեր-Հովհաննիսյանին

***Հարգելի՛ պարոն Տեր-Հովհաննիսյան,***

***Ի պատասխան Ձեր 11.08.2024թ. հարցման՝***

Հայտնում եմ, որ կանանց նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեում վիճակագրություն չի վարվում:

Ընտանեկան բռնության դեպքերով վարվում է վիճակագրություն, սակայն չեն առանձնացվում կանանց և տղամարդկանց նկատմամբ հանցագործությունները:

***Հարգանքով՝***

Պետ՝ Կ. Սահակյան

# ՀԱՎԵԼՎԱԾ 2

**ԴատաԼեքսի վիճակագրություն - Հոդված 194 - Հոգեկան ներգործություն**

**Առկա է 25 գործ, որոնցից 21-ում կինը տուժող է.**

***Դատական գործ N:***

1. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741151336

**ԱՎԴ/0073/01/24**

2. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947670454

**ԵԴ1/0420/01/24**

3. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947669219

**ԵԴ1/0281/01/24**

4. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741150672

**ԱՎԴ/0013/01/24**

5. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947667697

**ԵԴ1/0097/01/24**

6. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947667379

**ԵԴ1/2251/01/23**

7. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=30962247438370041

**ԼԴ/0428/01/23**

8. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947667144

**ԵԴ1/2210/01/23**

9. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741150081

**ԱՎԴ/0178/01/23**

10. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947666026

**ԵԴ1/2022/01/23**

11. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947665661

**ԵԴ1/1964/01/23**

12. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947663789

**ԵԴ1/1696/01/23**

13. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947663061

N: ԵԴ1/1498/01/23

14. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947663038

ԵԴ1/1493/01/23

15. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947662499

ԵԴ1/1413/01/23

16. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=30962247438358164

ԼԴ2/0082/01/23

17. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947658497

ԵԴ1/0850/01/23

18. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947657021

ԵԴ1/0585/01/23

19. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065624542

ՍԴ/0058/01/23

20. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065624439

ՍԴ/0053/01/23

21. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=45880421204368667

ԵԴ/1644/01/22

**ԴատաԼեքսի վիճակագրություն - Հոդված 195 - ֆիզիկական ներգործություն**

**Առկա է 191 գործ, որոնցից 142-ում կինը տուժող է.**

***Դատական գործ N:***

1. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=28710447624586639

ԱՐԱԴ/0198/01/24

2. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947676066

ԵԴ1/1250/01/24

3. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741152193

ԱՎԴ2/0113/01/24

4. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741152181

ԱՎԴ2/0114/01/24

5. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741152148

**ԱՎԴ2/0112/01/24**

6. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947675861

**ԵԴ1/1215/01/24**

7. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38843546786264390

ԱՐԴ/0505/01/24

8. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947675268

**ԵԴ1/1068/01/24**

9. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=16325548649416862

**ԿԴ/0448/01/24**

10. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947675076

**ԵԴ1/1028/01/24**

11. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=33495522228676818

**ԳԴ/0176/01/24**

12. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741151868

**ԱՎԴ/0114/01/24**

13. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741151841

**ԱՎԴ2/0090/01/24**

14. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947674534

**ԵԴ1/0975/01/24**

15. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947674132

**ԵԴ1/0919/01/24**

16. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=28710447624586380

**ԱՐԱԴ2/0018/01/24**

17. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065629828

**ՍԴ1/0066/01/24**

18. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741151568

**ԱՎԴ/0099/01/24**

19. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741151470

**ԱՎԴ2/0069/01/24**

20. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38843546786263810

**ԱՐԴ/0298/01/24**

21. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741151450

**ԱՎԴ1/0076/01/24**

22. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=16325548649416238

**ԿԴ/0285/01/24**

23. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947672818

**ԵԴ1/0720/01/24**

24. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=33495522228676578

**ԳԴ/0127/01/24**

25. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741151381

**ԱՎԴ/0079/01/24**

26. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=28710447624586152

**ԱՐԱԴ/0116/01/24**

27. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741151337

**ԱՎԴ/0078/01/24**

28. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741151333

**ԱՎԴ/0074/01/24**

29. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741151299

**ԱՎԴ/0069/01/24**

30. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=33495522228676433

**ԳԴ/0076/01/24**

31. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38843546786263552

**ԱՐԴ/0212/01/24**

32. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741151128

**ԱՎԴ1/0048/01/24**

33. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947670916

**ԵԴ1/0478/01/24**

34. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947670903

**ԵԴ1/0480/01/24**

35. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947670680

**ԵԴ1/0453/01/24**

36. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741151034

**ԱՎԴ1/0043/01/24**

37. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741150973

**ԱՎԴ/0044/01/24**

38. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741150970

**ԱՎԴ2/0033/01/24**

39. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741150933

**ԱՎԴ1/0035/01/24**

40. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=33495522228676283

**ԳԴ/0021/01/24**

41. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741150886

**ԱՎԴ2/0026/01/24**

42. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741150851

**ԱՎԴ1/0029/01/24**

43. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741150821

**ԱՎԴ1/0026/01/24**

44. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741150782

**ԱՎԴ/0019/01/24**

45. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947669312

**ԵԴ1/0294/01/24**

46. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38843546786263212

**ԱՐԴ/0122/01/24**

47. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=28710447624585610

**ԱՐԱԴ/0047/01/24**

48. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741150557

**ԱՎԴ/0010/01/24**

49. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=30962247438370315

**ԼԴ/0054/01/24**

50. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741150390

**ԱՎԴ2/0010/01/24**

51. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065629340

**ՍԴ1/0009/01/24**

52. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=28710447624585491

**ԱՐԱԴ1/0009/01/24**

53. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=28710447624585479

**ԱՐԱԴ/0026/01/24**

54. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065629318

**ՍԴ1/0006/01/24**

55. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=28710447624585466

**ԱՐԱԴ2/0005/01/24**

56. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947667697

**ԵԴ1/0097/01/24**

57. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38843546786262859

**ԱՐԴ/0021/01/24**

58. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947667539

**ԵԴ1/0047/01/24**

59. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947667379

**ԵԴ1/2251/01/23**

60. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947667154

**ԵԴ1/2214/01/23**

61. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947667144

**ԵԴ1/2210/01/23**

62. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=30962247438369889

**ԼԴ/0412/01/23**

63. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741150081

**ԱՎԴ/0178/01/23**

64. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947666340

**ԵԴ1/2085/01/23**

65. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947666126

**ԵԴ1/2041/01/23**

66. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947666050

**ԵԴ1/2028/01/23**

67. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947666026

**ԵԴ1/2022/01/23**

68. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947665661

**ԵԴ1/1964/01/23**

69. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947665623

**ԵԴ1/1958/01/23**

70. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741148519

**ԱՎԴ1/0123/01/23**

71. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741148429

**ԱՎԴ1/0120/01/23**

72. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947664808

**ԵԴ1/1875/01/23**

73. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947664745

**ԵԴ1/1875/01/23**

74. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947664745

**ԵԴ1/1860/01/23**

75. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741148085

**ԱՎԴ2/0116/01/23**

76. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947664607

**ԵԴ1/1849/01/23**

77. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947664584

**ԵԴ1/1846/01/23**

78. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947664527

**ԵԴ1/1830/01/23**

79. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947664442

**ԵԴ1/1808/01/23**

80. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947664307

**ԵԴ1/1785/01/23**

81. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947664225

**ԵԴ1/1771/01/23**

82. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741147716

**ԱՎԴ/0143/01/23**

83. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741147698

**ԱՎԴ2/0103/01/23**

84. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947664132

**ԵԴ1/1752/01/23**

85. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741147572

**ԱՎԴ1/0108/01/23**

86. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741147504

**ԱՎԴ1/0100/01/23**

87. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741147397

**ԱՎԴ/0135/01/23**

88. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741147049

**ԱՎԴ/0125/01/23**

89. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38843546786259461

**ԱՐԴ/0305/01/23**

90. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947663241

**ԵԴ1/1538/01/23**

91. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947663218

**ԵԴ1/1540/01/23**

92. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741146547

**ԱՎԴ2/0092/01/23**

93. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947663038

**ԵԴ1/1493/01/23**

94. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741146327

**ԱՎԴ1/0085/01/23**

95. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947662733

**ԵԴ1/1446/01/23**

96. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741146076

**ԱՎԴ/0107/01/23**

97. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947662499

**ԵԴ1/1413/01/23**

98. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741145976

**ԱՎԴ1/0078/01/23**

99. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741145871

**ԱՎԴ1/0076/01/23**

100. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947661994

**ԵԴ1/1367/01/23**

101. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741145326

**ԱՎԴ2/0087/01/23**

102. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741145215

**ԱՎԴ2/0085/01/23**

103. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741145213

**ԱՎԴ2/0084/01/23**

104. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947661428

**ԵԴ1/1266/01/23**

105. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947661365

**ԵԴ1/1238/01/23**

106. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947661326

**ԵԴ1/1240/01/23**

107. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947661089

**ԵԴ1/1209/01/23**

108. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741144677

**ԱՎԴ/0098/01/23**

109. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947660488

**ԵԴ1/1134/01/23**

110. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947660387

**ԵԴ1/1118/01/23**

111. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947659237

**ԵԴ1/0958/01/23**

112. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741141139

**ԱՎԴ/0080/01/23**

113. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38843546786252387

**ԱՐԴ/0196/01/23**

114. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741140550

**ԱՎԴ1/0045/01/23**

115. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065626062

**ՍԴ/0114/01/23**

116. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065625920

**ՍԴ/0109/01/23**

117. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065625919

**ՍԴ/0108/01/23**

118. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947658575

**ԵԴ1/0817/01/23**

119. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=33495522228671080

**ԳԴ1/0028/01/23**

120. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947658497

**ԵԴ1/0850/01/23**

121. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741139871

**ԱՎԴ1/0040/01/23**

122. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=28710447624578257

**ԱՐԱԴ2/0019/01/23**

123. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741139376

**ԱՎԴ1/0036/01/23**

124. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947657964

**ԵԴ1/0729/01/23**

125. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065625317

**ՍԴ/0095/01/23**

126. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947657510

**ԵԴ1/0648/01/23**

127. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38843546786248167

**ԱՐԴ/0159/01/23**

128. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38843546786248107

**ԱՐԴ/0160/01/23**

129. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065625120

**ՍԴ1/0024/01/23**

130. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741137931

**ԱՎԴ1/0032/01/23**

131. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741137873

**ԱՎԴ2/0054/01/23**

132. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947656780

**ԵԴ1/0515/01/23**

133. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=28710447624577354

**ԱՐԱԴ2/0015/01/23**

134. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065624916

**ՍԴ/0084/01/23**

135. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947656125

**ԵԴ1/0345/01/23**

136. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947654421

**ԱՎԴ1/0011/01/23**

137. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=45880421204421123

**ԵԴ/0729/01/23**

138. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=28710447624576486

**ԱՐԱԴ2/0006/01/23**

139. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=45880421204411682

**ԵԴ/0422/01/23**

140. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=33495522228667949

**ԳԴ1/0007/01/23**

141. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=45880421204405225

**ԵԴ/0267/01/23**

142. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=35465847065622424

**ՍԴ/0009/01/23**

**Ուսումնասիրված դատական գործերը.**

***Դատական գործ N:***

**ԵԴ/1644/01/22**

**ՍԴ/0053/01/23**

**ԵԴ1/0585/01/23**

**ԵԴ1/0850/01/23**

**ԼԴ2/0082/01/23**

**ԵԴ1/1413/01/23**

**ԵԴ1/1493/01/23**

**ԵԴ1/1498/01/23**

**ԵԴ1/1696/01/23**

**ԵԴ1/1964/01/23**

**ԵԴ1/2022/01/23**

**ԱՎԴ/0178/01/23**

**ԵԴ1/2210/01/23**

**ԵԴ1/2251/01/23**

**ԵԴ1/0097/01/24**

**ԱՎԴ/0013/01/24**

**ԵԴ1/0420/01/24**

**ԼԴ/0412/01/23**

**ԵԴ1/2214/01/23**

**ԿԴ/0249/01/24**

**ԵԴ1/1884/01/23**

**ԱՐԴ/0278/01/23**